

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

«Հարազատ թշնամին»
կը շարունակուի մինչեւ 2018 թուականը

ՄԻՔԱՑԷԼ ՄԱՀԱԿԵԱՆ
«168ԺԱՄ»

Յովիկ Աբրահամեանի կառավարութիւնն արդէն ամբողջութեամբ ձեւաւորուած է: Դրան նոր որակում տալը մօտաւորապէս կը լինի նոյնը, որ հերթական կեդժոռած ընտրութիւններէից յետոյ ձեւաւորուած իշխանութիւնը համարենք նոր: Այսինքն՝ իրականում կառավարութեան փոփոխութեամբ տեղի ունեցաւ ոչ թէ կադրերի, քաղաքականութեան, մօտեցումների, աշխարհայեացքի եւ էլի նման բաների փոփոխութիւն, թարմացում, այլ ճիշդ հակառակը՝ կատարուեց «վերադարձ՝ ի շրջանս իւր»»: Ամբողջ հարցն այն է, թէ որոնք են «իւր»-ի շրջանակները, աւելի պարզ ասած՝ նոր կառավարութիւնը գործող նախագահ Սերժ Սարգսեանի՝ «իւր»-ն է, թէ՛ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանին: Առաջին՝ մակերեսային տպաւորութիւնները, որ թողնում են նոր նախարարների անունները, վկայում են երկրորդի մասին, իմա՝ որ նոր կառավարութիւնը կազմուել է առաջին հերթին ու գրեթէ ամբողջութեամբ երկրորդ նախագահի իւրայիններէից: Արդեօք դա այդպէս է իրականում: Բազմաթիւ առիթներ ունեցել ենք արձանագրելու, որ եթէ իրականում տեղի է ունեցել այն, ինչը թւում է առաջին հայեացքից, այսինքն՝ Ռոբերտ Քոչարեանի մարդիկ են մաս կազմել կառավարութեանը, նշանակում է՝ Սերժ Սարգսեանի կողմից իշխանութեան յանձնում, գրեթէ կապիտուլիացիոն յանձնում: Սակայն իշխանութեան

յանձնումը պէտք է ունենայ նաեւ այլ ախտանիշեր, դրսեւորումներ, որոնք իշխանութեան ներկայիս համակարգում ամբողջովին բացակայում են. Հկայ խուճապ, Հկայ այն, ինչն ընդունուած է անուանել առնետավազք, հակառակը՝ իշխանութիւնը՝ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ, ցոյց է տալիս, որ վերջին փոփոխութիւններով ոչ թէ թուլացաւ, այլ աւելի ամրապնդուեց: Յոյց է տալիս ոչ թէ ցոյց տալու ու իրականութիւնը թաքցնելու համար, այլ, ըստ ամենայնի, արտայայտելով իրականութիւնը: Յովիկ Աբրահամեանի կաբինետի անդամների միջեւ «քոչարիանական-սարգսիանական» ջրբաժան անցկացնելը, մեղմ ասած, սխալ է եւ նշանակում է՝ տուրք տալ իշխանութեան (գործող եւ նախկին) նետած խայծերին ու թէժացնել արհեստական ինտրիգը, որի վարագոյրների յետեւում իշխանութիւնը (գործող եւ նախկին) կատարում է այդ իշխանութիւնը պահպանելուն ուղղուած քայլեր: Երկարաժամկէտ քայլեր: Այսինքն՝ իրականութիւնն այն է, որ Սերժ Սարգսեանը Ռոբերտ Քոչարեանի կադրն է, եւ Ռոբերտ Քոչարեանը Սերժ Սարգսեանի կադրն է: Իշխանութիւնը, այն տեսքով, որը հնարաւորութիւն էր տալու գրեթէ յաւերժացնել այն՝ փոխադարձ «փոխանցումներով», նրանք վերցրել են միասին՝ 1998 թուականին: Ընդ որում, դա տեղի է ունեցել այնպիսի յայտնի պայմաններում, որ պալատական յեղաշրջումը չէր կանայ առանց Սերժ Սարգսեանի մասնակցութեան, ինչպէս որ չէր կայանայ, եթէ դրան չմասնակցէր

Ռոբերտ Քոչարեանը: Վերջինիս նախագահութիւնը հնարաւոր է եղել 10 տարի պահպանել առաւելապէս Սերժ Սարգսեանի աջակցութեամբ, ինչպէս որ Սերժ Սարգսեանն է նախագահ դարձել Ռոբերտ Քոչարեանի առաջադրմամբ ու աջակցութեամբ: Այսինքն՝ Քոչարեանի ու Սարգսեանի միջեւ կայ այնպիսի օրգանական-քաղաքական կապ, որը որեւէ կերպ հնարաւոր չէ խզել: Եթէ շատ ընդհանրացուած ներկայացնենք այդ կապի արժէքը նրանց համար, ապա իրար դէմ պայքարի դէպքում նրանք շատ աւելին կը կորցնեն, քան կարող են շահել մէկը միւսին ասպարէզից մեկուսացնելու պարագայում: Հետեւաբար՝ իւրային-ոչ իւրային տարանջատման մէջ, թերեւս, մէկընդմիշտ պէտք է արձանագրել, որ ՀՀ երկրորդ ու երրորդ նախագահները հաւասարապէս մէկը միւսի կարգին: Աւելի իւրային չի լինում: Նաեւ դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ չնայած անցած վեց տարիներին նրանց ու նրանց շրջապատների կողմից մէկմէկու հասցէին ուղղուող կամիթներին ու իբրեւ թէ քննադատութիւններին՝ դրանք գործնականում քաղաքական ու տնտեսական դաշտում որեւէ ազդեցութիւն չունեցան: Նրանց սպասարկող քաղաքական թիմերը լայն իմաստով՝ չկորցրեցին իրենց դիրքերը, բայց, որ աւելի կարեւոր է, տեղի չունեցաւ սեփականութեան վերաբաշխում: Հաշուի առնելով Հայաստանի քաղաքական համակարգի դոմինանտ սկզբունքը՝ «ամէն ինչ ու առաջին հերթին՝ իշխանութիւնը հիմնուած է փողի վրայ», Սարգսեանի ու Քոչարեանի միջեւ իրական հակասութեան պարագայում՝ վերջինիս ազդեցութիւնը տնտեսական դաշտում պէտք

է զգալիօրէն նուազեր, նրա վերահսկողութեան տակ գտնուող ոլորտները պէտք է անցնէին Սարգսեանի մերձաւորներին: Բայց դա տեղի չի ունեցել: Սերժ Սարգսեանի շրջապատը բաւարար չափով ազդեցութեան գօտիներ ձեռք բերել է տնտեսական դաշտում, սակայն, ամենեւին ո՛չ Քոչարեանի բիզնես տիրոջթների հաշուին: Ինչո՞ւ, ուրեմն, այս պայմաններում հրաժարական տուեց Տիգրան Սարգսեանի կառավարութիւնը, երբ իրականում այն գլոբալ առումով կատարում էր բոլոր այն ֆունկցիաները, որոնք անհրաժեշտ էին Քոչարեան-Սարգսեան դուետի իշխանութեանը: Կարելի է այս հարցին պատասխանելու տաանեակ վարկածներ առաջ քաշել, որոնց մէջ վստահաբար կը լինի ճշմարտութեան հատիկ: Դրանցից մէկն էլ, թերեւս, այն է, որ Տիգրան Սարգսեանը կամ համարձակուեց, կամ նրան դրդեցին համարձակուել (համոզելով, որ դա պէտք է իշխանութեանը) խախտել ճամեայ տաբուն՝ քննադատել Ռոբերտ Քոչարեանին: Ընդ որում, քննադատել նրա համար «հպարտութեան առարկայ» եւ տասը տարի շարունակ քարոզչական տրաֆարետ հանդիսացած շինարարութիւնն ու դրա արդիւնքում ապահովուած երկնիշ տնտեսական աճը: Ըստ ամենայնի, միմեանց այդչափ քննադատելը չի մտել Քոչարեանի ու Սարգսեանի պայմանաւորուածութիւնների մէջ, եւ վերջինս ընդամէնը հեռացրել է այդ պայմանաւորուածութիւնը խախտող սուբիեկտներին՝ Տիգրան Սարգսեանին ու նրան քոչարիանական քննադատութեան հարցում ձայնակցած սեփական թիմակից նախարարներին: Նայէք կառավա-

Շաբ.ք էջ 18

Վտանգաւոր վիճակ Արցախում.
ԱՄՆ նոր նախաձեռնութիւնը

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

Աշխարհքաղաքական գործընթացներն աշխարհում, ինչպէս 25 տարի առաջ, կարող են հատուել Ղարաբաղում, ինչը կարող է դառնալ Եւրասիայում նոր ստատուս-թուոյի սկիզբը: Ինչպէս գրում է ամերիկացի յայտնի քաղաքագէտ Բրենդա Շաֆերը, ԱՄՆ-ն ինչ որ նոր նախաձեռնութիւններ է առաջ քաշել զարաբաղեան կարգաւորման մէջ: Դրանց էութեան մասին քաղաքագէտը չի գրել, սակայն Օբամային առաջարկել է դադարել Հայաստանի ու Ատրպէյջանի հետ խօսելը եւ ուղիղ բանակցութիւններ սկսել Ռուսաստանի հետ, որի ձեռքին է հակամարտութեան լծակը: Խոշոր հաշուով, կարգաւորումը վաղուց տեղի է ունենում Արեւմուտք-Ռուսաստան՝ Մինսկի խմբի համանախագահութեան ձեւաչափով: Այս պարագայում, ինչ են նշանակում ԱՄՆ նոր նախաձեռնութիւնները՝ դժուար է ասել, թէեւ կարելի է ենթադրել, որ կատարուեն իրավիճակը փաստաթղթերով ամրագրելու փորձեր, ըստ որի Ղարաբաղում չպէտք է լինեն երրորդ երկրների զօրքեր,

նախեւառաջ՝ Ռուսաստանի: Բրենդա Շաֆերը նոյնիսկ առաջարկում է յանուն դրա յետխորհրդային երկրներին չինտեգրել ՆԱՏՕ-ին եւ չպահանջել Հայաստանից ռուսական ռազմական բազայի դուրսբերումը: Այլ խօսքով, ներկայում ԱՄՆ «լուելեայն» պահանջում է ռուսական բազայի դուրսբերումը, սակայն կարող է հրաժարուել դրանից, եթէ Ռուսաստանը համաձայնուի զօրք չմտցնել Ղարաբաղ: Ռուսաստանը մտադիր է ուժեղացնել իր ներկայութիւնը Ղարաբաղում, եւ դա երեւում է ռուս առանցքային փորձագէտների նիւթերից: Ռուսական մամուլում սկսել են յայտնուել նիւթեր, այդ թւում հայկական ազգանուններով, որոնք Ղարաբաղին կոչ են անում օգնութեան համար դիմել Ռուսաստանին: Ղարաբաղից մինչ այժմ նման կոչեր չեն հնչել, պաշտօնական եւ ոչ պաշտօնական մակարդակներով: Աւելին, ինչպէս գրում է Շաֆերը, եթէ նախկինում հայկական իշխանութիւնները խօսում էին Ղարաբաղի անկախութեան անշրջելիութեան մասին, իսկ «նրա շուրջ տարածքները դիտարկում էին որպէս առեւտրի առարկայ», ապա ներկայում խօսում են ընդհանրա-

պէս տարածքային գիշումներին պատրաստ չլինելու մասին: ԱՄՆ-ին չյաջողուեց կազմակերպել Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահների հանդիպումը, թէեւ Սարգսեանն ու Ալիեւը վերջին երկու ամսուայ ընթացքում երկու անգամ միասին են եղել՝ Հաագայի ու Պրահայի վեհաժողովներում: Ըստ ամենայնի, հենց նախագահների հանդիպմանը պէտք է յայտարարուէր, որ Ղարաբաղը պէտք է մնայ «երրորդ երկրների զօրքերից զերծ գօտի»: Դա բնականաբար չի ցանկանում Ռուսաստանը: Դա չեն ցանկանում նաեւ Ատրպէյճանն ու թուրքիան: Նախեւառաջ այն պատճառով, որ եթէ ռուսական զօրքերը մտնեն Ղարաբաղ, նրանք կանգնելու են ոչ զարաբաղա-ատրպէյճանական ներկայիս սահմանին: Նրանք կանգնելու են այնտեղ, որտեղ իրար մէջ կ'որոշեն Մոսկուան, Պաքուն եւ Անքարան: Եւ դա կը յանգեցնի նրան, որ թուրք-ատրպէյճանական կողմը կը ստանայ այն, ինչին ձգտում է երկար տարիներ՝ նախկին ԼՂԻՄ շուրջ տարածքները: Այս ֆոնին պատահական չէ թուրքիայի ագրեսիւ քաղաքականութիւնը հայերի հետ հաշտուելու ուղղութեամբ: Բրենդա Շաֆերը «գովազդում» է այդ քաղաքականութիւնը, նշելով, որ Հայաստանը «Ռուսաստանից ազատուելու համար» պէտք է համաձայնուի տարածքների յանձնմանը, որպէսզի թուրքիան բացի սահմանը: Հայաստանը եւ Ղարաբաղը

Շաբ.ք էջ 18



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

**Առանցքային Վկան Փոխում Է Նախաքննական
Ցուցմունքը՝ Վոլոդիա Ալետիսեանի Գործով**

Խաղբախութեան մէջ մեղադրուող պահեստագործի գնդապետ Վոլոդիա Աւետիսեանի գործով դատական նիստի ժամանակ վկայ Հենրիկ Զաքարեանն ըստ էութեան հրաժարուեց նախաքննական ցուցմունքներէից, որոնց հիման վրայ էլ Աւետիսեանը յայտնուել է ճաղերի հետեւում:

Մեղադրական եզրակացու-
թեան համաձայն, Աւետիսեանը 2000
դրլար է յափշտակել՝ Զաքարեանի
թոռանը պարտադիր ժամկէտային
զինուորական ծառայութիւնից
ազատելու հարցում աջակցութիւն
ցոյց տալու պատրուակով:

Զաքարեանն դատարանում նախ յայտարարեց, որ վատ լիշողութիւն ունի, ապա՝ հիւանդ է, իսկ յետոյ սկսեց հարցերին կցկտուր պատասխանել: Յձ-ամեայ վկան յայտարարեց, որ Վոլոդիա Աւետիսեանին գումար է տուել ոչ թէ թողանը բանակից ազատելու, այլ բնակավայրին մօտ զօրամասում տեղաւորելու համար: Պնդեց, որ թողանը բանակից ազատելու մտադրութիւն չեն ունեցել, պարզապէս ցանկացել են մօտ զօրամասում ծառայութեան տեղաւորել՝ հիւանդութիւնների, այդ թւում եւ հոգեկան խնդիրների պատճառով: Աւետիսեանն էլ, իբր, նրանցից բժշկական փաստաթղթերը ձեւակերպելու, հիւանդ թողանը հիւանդանոցում օգնելու համար 2000 դոլար է ուզել:

«Ազատման համար չի եղել ոչ մի բան... Մենք ազատելու համար փող չենք առաջարկել», - դատարանում ասաց վկան:

Դատախազի հարցին, թե ինչու է Ալետիսեանին գումար տուել, Զաքարեանն արձագանքեց. - «Մա-

Ըստ Փորձագետի Ձեւաւորուել է Օլիգարխների Կառավարութիւն

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Մանուէլ Մարգարեանի գնահատմամբ՝ Հայաստանում ձևավորվող է օլիգարխների կառավարություն:

Նա թերահաւատ է, թէ կառավարութեան նոր կազմով հնարաւոր կը լինի դրական փոփոխութիւններ իրականացնել տնտեսութեան մէջ։

«Շատ տխուր է, որ մենք տեսանք ղէմքեր, որոնց մամուլը արդէն հասցրել է բնութագրել որպէս կաշառակերներ։ Խոշորագոյն կաշառակերների կառավարութիւն է։ Որովհետեւ հիմնականում բոլոր ղէմքերը յայտնի են, նախկին կառավարութիւններում աշխատած, բաւականին վատ համբաւ ունեցող»։

Վարչապետ Տիգրան Սարգս-
եանի հրաժարականից յետոյ առա-
ջին ելոյթում նախագահ Սարգսեա-
նը ասաց, թէ նոր կառավարութեան
կազմում հական փոփոխութիւններ
են լինելու: Արդէն ձեւաւորուած
կաբինետում, սակայն, փորձագէտ-
ներն այդ փոփոխութիւնները չեն
տեսնում՝ նկատելով, որ կառավա-
րութեան նոր անդամները պաշտոն-
ներ են զբաղեցրել նաեւ Ռոբերտ
Քոչարեանի օրօք:

«Նոյն կադերերը, որոնք աշխատել են մի ուրիշ կառավարութիւնում տարիներ առաջ, առաջինը, այսօր դա այդ կադերերը չեն: Այն մարդիկ են, որոնք այն տարիներին կարողացել են կուտակել կողուպցիայի հաշուին խոշոր սեփականութիւն, ֆինանսներ եւ դարձել են



Գնդապետ Վոլոդիա Աւետիսեան

դարիչ եմ տուել ես իրեն»:

Մեկադրոդ դատախազը հարկահամարեց նրա հակասական ցուցմունքներից յետոյ՝ վերլնթերցել նախաքննութեան ընթացքում երեք անգամ տրուած ցուցմունքները:

Վկան, ով հարցերը ընկալում էր դժուարությամբ ու պատասխանները հնչեցնում ոչ գրական հայերէնով, նախաքննութեան ժամանակ բաւականին գրագէտ ցուցմունքներ է գրել, ընդ որում, ինչպէս դատախազ Հենրիկ Պապիկեանը յայտարարեց՝ իր ձեռքով եւ իր բառերով:

«Այս հակասութիւնները մէկ
անգամ եւս հաստատում են այն
պնդումները, որ այս գործը շինծու
է», - եզրակացրեց Աւետիսեանի
փաստաբան Արա Զաքարեանը:

Դատական նիստից առաջ ազատամարտիկները դատարանի շենքի առջև կրկին բողոքի ակցիա անկացրեցին՝ պահանջելով մինչև մայիսի 9-ը ազատ արձակել իրենց մարտական ընկերոջը:



Փորձագէտ Մանուէլ Սարգսեան

օլիգարխներ: Օլիգարխների կառավարութիւն է: Դրա համար հականքան չէ՝ Ռոբերտ Քոչարեանի հետ կապուած են, չեն կապուած»:

Կովկասի ինստիտուտի տնօրէն Ալէքսանդր Իսկանդարեանը կառավարութեան կազմում որեւէ յեղափոխական փոփոխութիւն ի սկզբանէ չէր սպասէ: «Եղել են ընդամէնը փոխտեղումներ», - նոր նշանակումները մասին ասում է Իսկանդարեանը: Ինչ վերաբերում է Հանրապետր տնտեսական փոփոխութիւններին՝ ապա նրա կարծիքով երկրի տնտեսական զարգացման վրայ կառավարութեան ազդեցութիւնն այդքան էլ մեծ չէ:

«Կառավարութիւնը, իհարկէ, կարող է ինչ-որ սարսափելի միջոցներ ձեռնարկել, ինչ-որ սարսափելի սխալներ գործել, եւ դրա հետեւանքը բացասական կը լինի», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց իսկանդարեանը:

Գագիկ Ծառուկեան.
«Այս Անգամ Յաղթանակը Շրջանցելու Ե
Մելիք-Ադամեան փողոցը»

«Բարգաւաճ Հայաստան»-ի առաջնորդը վստահեցնում է, որ առաջիկայ ընտրութիւններում Հանրապետականը այլեւս չի յաղթելու:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանը յայտարարել է, թէ առաջիկայում ինչ ընտրութիւններ էլ անցկացուեն՝ նախագահական թէ խորհրդարանական, իշխող Հանրապետական կուսակցութիւնը աչիւս չի չաղթելու:

Ելոյթ ունենալով «Քարգաւաճ Հայաստան»-ի քաղաքական խորհրդի եւ խորհրդարանական խմբակցութեան համատեղ նիստում՝ Ծառուկեանը մասնաւորապէս հակադարձել է Ազգային ժողովի փոխնախագահ, Հանրապետական կուսակցութեան խօսնակ էդուարդ Շարմազանովի օրերս հնչեցրած այն պնդմանը, թէ «եթէ որեւէ մէկը զալիք տարիների ընթացքում յաւակնուժէ մտախաղաչի կամ վարչապետի պաշտօնին, ապա այդ ճանապարհն անցնում է Մելիք-Աղամեան փողոցով», որտեղ գտնուում է իշխող կուսակցութեան գրասենեակը:

«Յանկադամ» համապետական
ընտրութիւն՝ դա կը լինի խորհր-
դարանական, կը լինի նախագահա-
կան, ընտրութեան հիմնական տե-
ղը, որոշողը ժողովուրդն է: Իսկ
էսօր դուք գիտէք ժողովրդի

ՀԱԿ-ը Չի Մասնակցում Կուտակայինի Շուրջ Քննարկումներին

Կուտակային բարեփոխման վե-
րաբերեալ կառավարութիւնում
ստեղծուած աշխատանքային խմբի
աշխատանքները դեռ չեն սկսուել,
չնայած Յովիկ Աբրահամեանը
խորհրդարանական խմբակցու-
թիւններին հրաւէր ուղարկել է
մօտ մէկ ամիս առաջ:

NEWS.am-ի հետ գրույցում Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Թեան Պօղոսեանը յայտնեց, որ իրենք ընդունել են վարչապետի առաջարկը, սակայն աշխատանքները դեռ սկսուած չեն:

ԲՀԿ խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեանը NEWS.am-ի հետ զրոյցում նշեց,

«Հայկական ժամանակ». Աբրահամեանն Ու
Ծառուկեանը Ձգտում են Հասնել Վլադիմիր
Գասպարեանի պաշտօնանկութեանը

«Հայկական ժամանակ» թերթը գրում է որ, «Քաղաքական շրջանակներում նոր ինտրիգ է հասունանում: Նորանշանակ վարչապետ Յովիկ Աբրահամյանը եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանը ջանքեր են գործադրում ոստիկանութեան պետ Վլադիմիր Գասպարեանի պաշտօնանկութեանը հասնելու համար:

Հուրեր կան, որ վարչապետ Յովիկ Աբրահամեանը մտադիր է այս Թեմայով խօսակցութիւն ունենայ Սերժ Սարգսեանի հետ:

Այն, որ վարչապետ Յովիկ Աբրահամեանը, ինչպէս նաեւ նրա խնամին՝ Գագիկ Ծառուկեանը, իրականում բարի դրացիական շարաբերութիւններ չունեն գործող ոստիկանապետ Վլադիմիր Գապարեանի հետ, թերեւս շատերին է յայտնի: Իշխանական շրջանակներում խօսում են նաեւ, որ վարչա-



**Գագիկ Մառուկեան «Բարգաւան
Հայաստան»-ի անաջնորդ**

մօտեցեցումն էլ, տեսակէտն էլ, թէ՛
էսօր որ միասնական իրենց ապ-
րելակերպի, առօրեայի վրայ զգա-
լով՝ նրանք պատրաստակամ են
կանգնելու, իրենց ձայնին տէր
կանգնելու եւ իրավիճակը փո-
խելու», - յայտարարել է «Բարգա-
ւամ Հայաստան»-ի առաջնորդը՝
շարունակելով - «Այնպէս որ, կա-
րող եմ ասել՝ այս ընտրութիւննե-
րը՝ դա կը լինի խորհրդարանական
թէ՛ նախագահական, որ ասեմ, թէ՛
այս անգամ յաղթանակը շրջանցե-
լու է Մելիք-Ադամեան փողոցը»:

Ըստ էութեան, սա Գազիկ Ծառուկեանի առաջին հրապարակային ելոյթն է իր խնամով՝ Յովիկ Աբրահամեանի վարչապետ նշանակուելուց յետոյ:

որ իրենք նոյնպէս ընդունել են առաջարկն ու իրենցից մասնակցելու է Միքայէլ Մելքումեանը: ՀՅԴ-ն նոյնպէս համաձայնուել է աշխատել կառավարութեան հետ չորսօրէնքի հետ կապուած:

«Քառեակից» միակ ուժը, որ
չի մասնակցում, Հայ ազգային կոնգ-
րեսն է: NEWS.am-ի հետ զրոյցում
ՀԱԿ խմբակցութեան քարտուղար
Արամ Մանուկեանն ասաց, որ իրենք
չեն պատրաստուում «Սերժ Սարգս-
եանի ձեւաւորած կառավարութեան
հետ ինչ -որ բան քննարկել»:

«Մենք ոչ մի քննարկման չենք մասնակցելու: Դա հաստատ է, եւ այդ մասին էլ ասել եմ արդէն խորհրդարանում», - աւելացրեց նա:

պետ Յովիկ Աբրահամեանը ցանկանում է ոստիկանապետի պաշտոնում տեսնել փոխոստիկանապետ Յունան Պողոսեանին: Վերջինս 2004–08թթ. եղել է ոստիկանութեան Արարատի մարզային վարչութեան պետ: Սա կարեւոր փաստ է, եթէ հաշուի առնենք, որ Արարատը համարուել է Յովիկ Աբրահամեանի կալուածքը, իսկ Գագիկ Ծառուկեանը լայնածաւալ բիզնէս ունի այդ մարզում:

Ուշագրաւ է, որ խօսակցութիւններ են պտտուում, թէ Վլադիմիր Գասպարեանի թիկնազօրի պետ Արշակ Յակոբեանը, ում անունը, ի դէպ, այս ընթացքում կապուել է զանազան աղմկոտ պատմութիւնների հետ, ձեռքակալուել է: Ուստիկանութեան լրատուական ծառայութիւնից, աստաջն, մեզ յայտնեցին, թէ նման բան չկայ: «Անհետեւութիւն է», - պատասխանեցին լրատուականից»:

ԼՈՒՐԵՐ

«Foreign Affairs». Լեռնային Ղարաբաղը
Ղրիմից Յետոյ

NEWS.am-ը հատուածներ է ներկայացնում ամերիկեան «Foreign Affairs» (Արտաքին Յարաբերութիւններ) ամսագրում հրապարակուած յօդուածից, որի հեղինակն է ամերիկեան ու իսրայէլական զիտնական, Քարաքական զիտութիւնների ամերիկեան ասոցացիայի անդամ Բրենդա Շաֆերը:

Մայիսի սկզբին Օբամայի վարչակազմը կը յայտարարի Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման նոր ջանքերի մասին: Սրանք նմանատիպ առաջին ջանքերը չեն եւ, հաւանաբար, ոչ վերջին: Սակայն Ռուսաստանի կողմից Ղրիմի անեքսիայից յետոյ է Միացեալ Նահանգները, կարծես, աւելի քան երբեւէ ձգտում են լուծել երկարատեւ վէճը, որը Մոսկուան ուռճացնում էր տարածաշրջանում իր ազդեցութիւնը պահպանելու համար:

Մոսկուան անկաշուն ստատուսքլոն համարում է միջոց Հարաւային Կովկասն իր վերահսկողութեան տակ պահելու համար: Մի կողմից չլուծուած հակամարտութիւնը երաշխաւորում է, որ Հայաստանը չի ինդրի ռուսական զօրքերին հեռանալ: Եւ քանի դեռ Ռուսաստանն այնտեղ զօրքեր կ'ունենայ, կը կարողանայ ծնշում գործադրել Հայաստանի վրայ Արեւմուտքի հետու մնալու համար:

Խաղաղ ջանքերը յաջողութեամբ չպսակուեցին, քանի որ Միացեալ Նահանգները Հայաստանն ու Ադրբեյջանը դիտում էին որպէս հիմնական գործող անձինք՝ ուշադրութիւն չդարձնելով Ռուսաստանի դերին: Օրինակ, ԱՄՆ-ի պետաքարտուղարները եւ յատուկ բանակցողները մեղադրում էին Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահներին, որ նրանք «իրենց ժողովուրդներին

չեն պատրաստում խաղաղութեան», Մինսկի խմբի համանախագահները նախատում էին անցեալ տարի, ինչպէս նաեւ այն բանի համար, որ չեն գալիս համաձայնութեան: Նրանք միլիոնաւոր դոլարներ են ներդրել երկու հասարակութիւնների միջեւ կապերի հաստատման համար, բայց երբեք ռազմավարութիւն չեն մշակել Մոսկուայի հետ գործ ունենալու համար, քանի որ մինչ Ղրիմը վաշինգթոնը երբեք չի ճանաչել, թէ որքանով է Մոսկուան էթնիկ հակամարտութիւնները տարածաշրջանում օգտագործում որպէս ազդեցութեան լծակներ:

Այժմ, երբ Ռուսաստանը այլ պատճառներով Արեւմուտքի պատժին է արժանացել, պատճառ չկայ ինդիրը դադարի վիճակում պահելու համար: Ռուսաստանն ապացուցեց պատրաստակնութիւնը ռազմական ուժ կիրառել (ինչպէս որ վրաստանում եւ Ուկրաինայում), ինչպէս նաեւ օգտագործել ընտրական գործընթացները եւ քաղաքացիական հասարակութեան կազմակերպութիւններն օգտագործել նպատակին համելու համար: Արեւմուտքը պէտք է դիմադրի:

Սակայն կարող են արդեօք առաջիկայ բանակցութիւնները յաջողուել: Որոշ գործօններ բարենպաստ են: Պոստինը ոգեւորուած է Ղրիմի յաջողութեամբ եւ կարծես մտադիր չէ զիջումների գնալ: Օբամայի վարչակազմում ոմանք համաձայն չեն սրա հետ՝ պնդելով, որ Պոստինը ցանկանում է կարգաւորել յարաբերութիւններն Արեւմուտքի հետ եւ որ Հարաւային Կովկասում փոխզիջումը հեշտ միջոց կարող են լինել: Սակայն սա աւելի շատ նման է ցանկացածն ընդունել որպէս իրականութիւն:

Թուրքիայի Մարդու Իրաւունքների Միութիւնը
Հայերին Ուղղուած Էրդողանի Ուղերձը
Ցեղասպանութեան Ժխտում Է Որակել

Թուրքիայի մարդու իրաւունքների միութեան Ստամբուլի գրասենեակը յայտարարութիւն է տարածել՝ նշելով, որ վարչապետ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի ցաւակցական ուղերձը հայերին սովորական ժխտողական տեքստ էր:

Թուրքական Bianet.org կայքի փոխանցմամբ՝ Մարդու իրաւունքների միութեան Ստամբուլի գրասենեակի Ռասիզմի եւ խտրականութեան դէմ յանձնաժողովը յայտարարել է, որ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ սկսել է «վերջ ժխտողականութեանը» արշաւը:

Յանձնաժողովի անունից յայտարարութեամբ հանդէս եկած էրեն Քեսքինը, անդրադառնալով Էրդողանի յայտնի ուղերձին, նշել է, թէ

Թուրքիայում առաջին անգամ պետութեան
Ֆինանսաւորմամբ հայերէն գիրք է հրատարակուելու

Թուրքիայի մշակոյթի եւ սուրիզմի նախարարութիւնը պատրաստում է Յունիսին հրատարակել հայ մեծ աշուղ Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնները ներառող գիրք՝ հայերէն եւ թուրքերէն լեզուներով:

Թուրքական Sa bah-պարբերականի փոխանցմամբ՝ Թուրքիայի պատմութեան մէջ առաջին անգամ պետութեան ֆինանսաւորմամբ հայերէնով գիրք է հրատարակուելու: Հայ աշուղ Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնները հաւաքուելու են մի գրքում եւ հրատարակուեն հա-

չնայած էրդողանի յայտարարութեան լեզուն նախադէպ էր պատմութեան մէջ, սակայն տեքստը կրկին Ցեղասպանութեան հերթական ժխտումն էր:

«1915-ին Օսմանեան պետութիւնը հայ ժողովրդի հանդէպ ցեղասպանութիւն է իրականացրել: Ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ յանցանք է: Ցեղասպանութեան ժխտումն էլ մարդու իրաւունքների ծանրագոյն խախտում է»,-ասուել է էրեն Քեսքինի յայտարարութեան մէջ:

Նշենք, որ Թուրքիայի պատմութեան մէջ առաջին անգամ վարչապետը ցաւակցութիւն է յայտնել 1915-ի գոհուածներին, սակայն իր յայտարարութեան տեքստում կրկին չի հեռացել պաշտօնական ժխտողական թէգից:

յերէնով եւ թուրքերէնով:

Նշուում է, որ գիրքը գրախանութիւններում կը յայտնուի այս տարուայ Յունիսին:

Թէեւ այս ժողովածուի ստեղծման աշխատանքները մեկնարկել են 2 տարի առաջ, իշխանամէտ Sa bah-ը այն ներկայացրել է իբրեւ էրդողանի հերթական «բարեգութ» քայլը հայերի նկատմամբ իր յայտնի ուղերձից յետոյ:

Թուրքիայի մարդու իրաւունքների միութիւնը հայերին ուղղուած էրդողանի ուղերձը Ցեղասպանութեան ժխտում է որակել:

Արարատի Փեշերին Ապրող Իսլամացած
Հայերը Յոյս Ունեն Գտնել Հայաստանում
Հաստատուած Իրենց Ազգականներին

Թ ու ը ք ի ա յ ի վարչապետ Ռեջէփ Թայյիփ Էրդողանի՝ «1915թ.-ի դէպքերին առնչուող» ցաւակցական ուղերձը Արարատի (թուրքերը կոչում են Աղըր Դաղ) փեշերին բնակուող եւ ժամանակի ընթացքում իսլամացած հայերին շատ է ուրախացրել, գրում է թուրքական «Սթար» թերթը:

Նրանք նշում են, որ իրենց հիմնական



Արարատի ստորոտին բնակող՝ իրենց հիմնական իսլամացած հայեր

ցանկութիւնն այն է, որ տարիներ շարունակ որեւէ լուր չունեցած իրենց հարազատները գտնեն իրենց:

Արարատի ստորոտին գտնուող, նախկինում հիմնականում հայաբնակ գիւղերում մնացածները պահանջում են բացել հայթուրքական սահմանը:

Նրանք նշում են, որ այստեղ բնակւում են տարիներ շարունակ, իսկ իրենց պապերը ստիպուած են եղել լքել այստեղի բնակավայրերը: Նրանք էրդողանի յայտարարութիւնն առաջընթաց են համարում եւ ուրախանում են:

Ժամանակի ընթացքում իսլամն ընտրած գիւղացիներն ասում են. «Հայաստանն ու Թուրքիան թող բացեն սահմանը: Հանգիստ գնանք մեր հարազատներին հիւր, նրանք

ապահովութեան երաշխիքներ, ներառեալ խաղաղապահ ուժեր:

Դեսպան Ուորըլթի կարծիքով ժամանակը եկած է որպէսզի Հայաս-

էլ մեզ տեսնելու թող գան: Երկար տարիներ մեր մերձաւորներից լուր չունենք: Վարչապետի այս դրական կեց-ւածքի շնորհիւ նրանք կը գան ու կը գտնեն մեզ»:

68-ամեայ Զէքի Շ.-ն նշում է, որ իրենք շատ երջանիկ են, որ Թուրքիայի վարչապետն առաջին ագամ հասկացել է իրենց ցաւը:

«Դա աննկարագրելի ուրախութիւն է մեզ համար: Մեր պապերն այստեղից արտաքսուել են: Մնացել ենք մենք: Տարիներ շարունակ այստեղ ապրել ենք խաղաղութեամբ»,-ասում է նա՝ նշելով, որ իր զաւակներն ու թոռները Հայաստանում բնակուող իրենց մերձաւորներին տեսնել են երազում:

տանի եւ Ատրպէյճանի ղեկավարները իրենց ժողովուրդները պատրաստեն խաղաղութեան, փոխադարձ վստահութեան երաշխիքներ ստեղծելով:

Անգարա Երկիստութեան Կոչ Կ'ընէ

Շարունակուած էջ 1-էն

Դաւութթօղլու այս կոչին Հայաստանի կողմէ տակաւին պաշտօնական արձագանք եղաւ, սակայն, Ապրիլ 24-ի նախօրէին Թուրքիոյ վարչապետ Էրտողանի անակնկալ յայտարարութիւնը Հայաստանի իշխանութիւններ որակեցին «ժխտման ու քողարկման հերթական՝ աւելի կատարելագործ-

Մինսքի Խումբի Ամերիկացի Համանախագահը

Շարունակուած էջ 1-էն

թիւն, որուն անոնք արժանի են», - ըսած է Մինսկի խումբի ամերիկացի համանախագահը:

Ուորըլթ նաեւ ներկայացուցած է ընդունուած փոխզիջման հիմնական տարրերը, յայտնելով, որ անոնք կը կազմեն Մինսկի խումբի ու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ ԱՄՆ քաղաքականութեան հիմքը եւ ընդգծած է, որ անոնք պէտք է դիտարկուին որպէս անբաժանելի ամբողջականութիւն:

Ըստ Ամերիկացի դիւանագէտին, համաձայնութեան հիմնական տարրերը կը կազմեն հետեւեալ կէտերը.

Առաջին, նկատի առնելով Լեռնային Ղարաբաղի բարդ պատմութիւնը, վերջնական ճակատագիրը պէտք է ճշդուի ապագային կայանալիք հանրաքուէի միջոցաւ:

Երկրորդ, նախկին Լեռնային

ուած դրսեւորում», ընդգծելով որ հայերու եւ Հայաստանի նկատմամբ Թուրքիոյ վերաբերմունքը պատմութիւն չէ, քանի որ ամբողջութեամբ կը շարունակուի արդի քաղաքականութեան մէջ, իսկ լաւագոյն դրսեւորումներն են Հայաստանի ապօրինի շրջափակումը եւ Հայաստանի նկատմամբ Թուրքիոյ վարած քաղաքականութիւնը միջազգային ատեաններէն ներս:

Ղարաբաղի ինքնավար մարզի սահմաններէն ներս գտնուող տարածքին վրայ պէտք է հաստատուի ժամանակաւոր կարգավիճակ՝ նուազագոյնը ապահովութեան եւ ինքնակառավարման երաշխիքներով:

Երրորդ, գրաւեալ տարածքները, որոնք կը գտնուին Լեռնային Ղարաբաղի շուրջ, պէտք է վերադարձուին Ատրպէյճանի հսկողութեան տակ:

Չորրորդ, պէտք է հաստատուի միջանցք՝ Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը իրարու կապող: Ան պէտք է ըլլայ բաւականաչափ լայն, ապահով անցք տրամադրելու համր, սակայն պէտք չէ ընդգրկէ ամբողջ Լաչինի շրջանը:

Հինգերորդ, մնալուն լուծում ապահովելու համար, գաղթականներն ու տեղահանուածները պէտք է վերադառնան իրենց նախկին բնակարանները:

Վեցերորդ, համաձայնութիւնը պէտք է ընդգրկէ միջազգային

ՍԵՊՈՒՅ ԳԱԼՊԱՔԵԱՆ

«ՆԱԽԱԳԱՅ ԸՆՏՐԵԼՈՒ ԽՈՐՅՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՍՈԴԵԼՆ ԱԻԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ Է»

ԱՆՈՒՇԹՐՈՒԱՆՑ
«168Ժամ» առցանց
լրատուական կայք

Արդէն երկրորդ շաբաթն է՝ Լիբանանը չի կարողանում ընտրել իր 13-րդ նախագահին: Մայիսի 25-ին լրանում է գործող նախագահ Միշէլ Սուլէյմանի պաշտօնավարման ժամկետը, իսկ մինչ այդ Լիբանանի խորհրդարանը պէտք է ընտրի երկրի նոր նախագահ: Անցեալ Չորեքշաբթի խորհրդարանական նիստի ժամանակ առաջադրուած միակ թեկնածուն չհաւաքեց ձայների անհրաժեշտ 2/3-ը, իսկ այսօր կայացած նիստի ժամանակ էլ չապահովուեց քուէարկութիւն անցկացնելու համար անհրաժեշտ քուորումը: «Երկիրը գնում է դէպի պարապոլիս», - այս մասին «168 ժամի» հետ զրոյցում ասաց Լիբանանի խորհրդարանի հինգ հայ պատգամաւորներից մէկը՝ խորհրդարանի «Հայկական Համախոհական Խմբաւորման» անդամ, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կենտրոնական վարչութեան փոխատենապետ Սեպուհ Գալպաքեանը: Նա նաեւ Լիբանանի խորհրդարանում Սաադ Հարիրիի գլխաւորած «Ալ Մուստաքպալ» խորհրդարանական խմբակցութեան անդամ է:

Ըստ Սեպուհ Գալպաքեանի՝ երկրի խորհրդարանում ներկայացուած երեք հիմնական քաղաքական խմբակցութիւնները համաձայնութեան չեն գալիս: - Պարոն Գալպաքեան, արդեօք Լիբանանի խորհրդարանի պատգամաւորները չեն կարողանում որոշում կայացնել նախագահ ընտրելու հարցում, այլ սպասում են դրսի ուժերի միջամտութեանը, ինչպէս եղել է սովորաբար:

- Առայժմ այդտեղ չենք հասել: Առայժմ ներքին մակարդակով են ընթանում բանակցութիւնները: Ի դէպ, այս անգամ որեւէ պետութեան արտաքին միջամտութիւն այնքան էլ զգալի չէ, որովհետեւ, եթէ լինէր այդպիսի բան, արդէն իսկ առաջին կամ երկրորդ փուլից ի յայտ կը գար: Տարածաշրջանի ծանր ու կարեւոր հարցերի ներքոյ Լիբանանն ու նրա նախագահի ընտրութիւնը հետաքրքրութիւն չեն ներկայացնում դրսի ուժերի համար: Այս օրերին ու առաջիկայում իրանեան եւ ամերիկեան բանակցութիւնները կան, կան Սիրիայի եւ Եգիպտոսի նախագահի, Իրաքի խորհրդարանական ընտրութիւնները, եւ մեծ տէրութիւններն աւելի շատ կենտրոնացած են այդ հարցերի ու այդ շրջանների վրայ:

- Իսկ երկրի ներսում ուժերն ի՞նչ են ուզում:

- «Մարտի 8» քաղաքական ուժը փորձում է «Մարտի 14» քաղաքական ուժի մէջ ներառուած ամենամեծ խմբաւորման՝ «Ալ Մուստաքպալ» հոսանքի ղեկավար Սաադ Հարիրիին համոզել, որ թեքուի դէպի իրենց՝ փոխարէնն ինչ-որ առաջարկներ անելով եւ խոստումներ տալով: Սակայն այդ ցանկութիւնն իրականութիւն դառնալուց առայժմ հեռու է, քանի որ երկու ուժերն էլ տարիներով հակասութիւններին մէջ էին: (Նշուած երկու ուժերը 2005 թուականի Մարտին ստեղծուած երկրի հիմնական քաղաքական ուժերն են՝



Սիրիայի իշխանութիւնների քաղաքականութեան հանդէպ ունեցած յստակ ու միմեանցից խիստ տարբեր դիրքորոշմամբ.- Ա.Թ.):

Մի բան յստակ է, որ մենք գնում ենք դէպի քաղաքական դատարկութիւն: Չեմ կարծում, թէ մինչեւ Մայիսի 25-ն ուժերը համաձայնութեան գտն, եւ Լիբանանի նախագահի ընտրութիւնը հաւանաբար կ'ուշանայ, մինչու որ կա՛մ լիբանանցիները դրսից միջամտութիւն խնդրեն, կա՛մ տարածաշրջանում կարեւոր հարցերն աւարտուեն, հետաքրքրութիւն ստեղծուի Լիբանանի հանդէպ, եւ ընտրութիւնը կայանայ: Ի դէպ, այսպիսի մի շրջան եղել է. նախորդ նախագահի ընտրութիւնից առաջ վեց ամիս շարունակ երկիրը նախագահ չի ունեցել: Նորից գնում ենք դէպի դրան:

- Դուք ի՞նչ ուժ եք տեսնում նախագահի պաշտօնում:

- Նախ՝ ասեմ, որ առանց գործող ուժերի միջեւ համախոհութեան, հնարաւոր չէ ընտրութիւն կատարել: Մենք՝ «Ալ Մուստաքպալ» խմբակցութեան անդամներս, ուզում ենք, որ մեր թեկնածուն լինի «Մարտի 14» քաղաքական ուժի շրջանակից դուրս եկած մարդ, մեզ համար այս դէպքում անձը կարեւոր չէ, կարեւոր են «Մարտի 14»-ի որդեգրած ուղղութիւնն ու նրա ապագայի ծրագրերը, որոնցից ամենակարեւորն ուժեղ պետականութեան ստեղծումն է, ինչի համար այս քաղաքական միաւորումը պայքարում է 2005 թուականից ի վեր, Ռաֆիք Հարիրիի սպանութիւնից յետոյ:

Պայքարում ենք, որ պետութիւնն ուժեղ դառնայ, երկրում չմնան այնպիսի ուժեր, որոնք իրենց ունեցած գէնքերով գերակայ են զգում իշխանութիւնների հանդէպ: Բոլորին յատնի այդ ուժերն իբր թէ այդ գէնքերը պահում են իսլալիզմի դէմ դիմադրութեան համար, բայց դրանք յաճախ դէպի երկրի ներս են ուղղում, երբեմն էլ ուղղում են դէպի Սիրիա, ինչը մենք ամբողջովին սխալ ենք համարում: Դա միջամտութիւն է այլ երկրի ներքին խնդիրներին, հենց այդ պատճառով էլ Լիբանանն ընկաւ ծանր օրերի գիրկը:

Անցեալ տարի երկրում մեծ ահաբեկչական դէպքեր տեղի ունեցան. դա պատասխան էր «Հրզպալաւ» շարժման՝ Սիրիա մուտք գործելուն: Հիմա, բարեբախտաբար, այդ առումով վիճակը հանդարտ է Լիբանանում, բայց դա չի նշանակում, թէ չի կարող կրկնուել:

Շաբ.ք էջ 18



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 24, 2014-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը Կ. Պոլսոյ մէջ իր մասնակցութիւնը քերաւ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկներում: Այս առաջին անգամ էր որ հայկական ֆաղափական կուսակցութիւն մը կը մասնակցի Թուրքիոյ մէջ Ապրիլ 24-ի ոգեկոչման:

Բոլոր այն հայկական կազմակերպութիւնները, որոնք կ'ուզեն ներդրում ունենալ Հայոց Ցեղասպանութեան իրականութիւնը Թուրքիոյ կողմէ մանաչման գործին մէջ, պէտք է միանան ընդհանուր հարթակի շուրջ ստեղծելու համար ընդհանուր աշխատանքային եւ համա-գործակցութեան դաշտ մը Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին:

Այս հեռանկարով Կ. Պոլսոյ մէջ հանդիպումներ տեղի ունեցան Թուրքիոյ ֆաղափացիական հասարակութեան հետ, յատկապէս Իսթանպուլի Մարդու Իրաւունքներու մասնաճիւղին հետ (Insan Haklari Dernegi), ինչպէս նաեւ Թուրքիոյ Կանաչներ եւ Ձախ Ապագայ կուսակցութեան (Yesiller ve Sol Gelecek Partisi) հետ:

24 Ապրիլ 2015-ի ոգեկոչումները տեղի պիտի ունենան Անաթոլիոյ աւելի քան 20 ֆաղափներու մէջ, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ մէջ այս հարթակի միումով:

Ժողովուրդը պատրաստ է այս ձեռնարկներուն, այս նպատակով նախաձեռնող խումբեր պիտի կազմուին 2015-ի տարուան ընթացքին եւ յատկապէս Ապրիլ 24-ին:

Այս միջոցառումները կարեւոր են, որովհետեւ առանց Հայոց Ցեղասպանութեան մանաչման եւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու վերադարձուելուն կարելի պիտի չըլլայ Թուրքիոյ հասարակութիւնը ժողովրդականացնել:

Մենք կոչ կ'ուղղենք բոլոր այն ուժերուն, որոնք կը փափաքին աշխատիլ այս միութեան մէջ, որ միակ միջոցն է ապագայի յաղթանակին:

Ա.Դ.Հ.Կ. Ֆրանսայի Վարիշ Մարմին
Փաքիզ, 24 Ապրիլ 2014

Ա.Դ.Հ.Կ. «ՀԱՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴ»-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿ. ՍԱՐՕ ՄԱՐՏԻՐԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ «LE PARISIEN» ԹԵՐԹԻՆ

Ա Լ Ֆ Ո Ր Վ Ի Լ

«Հայոց Ցեղասպանութիւնը կը մնայ խարսխուած մեր մէջ»: Կէսօրին, արարողութեան ընթացքին, փայլք մը կ'անցնի երկիրքէն, յոյսի մը պէս որ Հայոց Ցեղասպանութիւնը պիտի ընդունուի թուրք պետութեան կողմէ: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Ֆրանսայի վարիչ մարմնի ատենադպիր, Սարո Մարտիրեան ծնեալ Թուրքիա



35 տարիներ առաջ, հարիւրաւոր անձերու հետ մասնակցեցաւ Ալֆորվիլի մէջ տեղի ունեցած Ցեղասպանութեան 99-րդ նշումին: Ցեղասպանութիւնը, որ գործադրուած է Օսմանեան կայսրութեան կողմէ 24 Ապրիլ 1915-էն սկսեալ: Մօտ մէկ տարուան ընթացքին 1.5 միլիոն հայեր կոտորուեցան եւ արտաքսուեցան: Դրժելով կոտորածին իրականութիւնը, Չորեքշաբթի օր, Թուրքիոյ վարչապետ Ռէճէփ Թայյիփ Էրտողան յայտնեց իր «ցաւակցութիւնները» անոնց ժառանգորդներուն:

Թղթակից-Հիմգշաբթի օր դուք Թուրքիա կը գտնուէիք Աշտու համար ցեղասպանութիւնը: Այս առաջին անգամն է՞ր:

Սարո Մարտիրեան - Երբ Ալֆորվիլի հասայ 5 ամսական էի եւ երբեք չէի ուզեր վերադառնալ Թուրքիա: Հայոց ճակատագիրը շատ դժուար է այնտեղ: 2010

թուականին թրքական կուսակցութիւն մը ցոյց կազմակերպեց եւ ես զգացի որ անոնց կողքին պէտք է ըլլալի: Այդ տարի գացի երեք ֆրանսահայ ներկայացուցիչներու հետ: Շատ ուժեղ եւ խորհրդանշական պահեր էին:

Թղթակից-Ի՞նչ բանն է որ ձեզ կը ոգեւորէ Ալֆորվիլի 99-րդ Աշտումին:

Սարո Մարտիրեան-Այդ կը ներկայացնէ մեր պայքարը ի չիշատակ մեր նահատակներուն, իրաւունքներու պահանջատիրութեան եւ արդարութեան համար: Այդ մեր պարտականութիւնն է, որ ամէն տարի կը չիշատակենք: Մօտաւորապէս մէկ դար ետք, ան կը մնայ խարսխուած մեր մէջ: Մենք պիտի չհրժարինք:

Թղթակից-Ձեր կուսակցութիւնը ի՞նչ ալ հաստատուած է...

Սարո Մարտիրեան-Հնչակեան

Շաբ.ք էջ 18

ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԿԸ ՀԱՍՆԻ \$900,000Ի



Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմնի (ՄԱՐՖ) կազմակերպութեամբ «Հայք3» (HyeAID3) համերգը տեղի ունեցաւ Կլէնտէյլի Ալեքս թատերասրահին մէջ, Ապրիլ 29, 2014ին, հանգանակելով 100,000 տոլար Սուրիահայութեան համար: Միացեալ Մարմինը Քեսապահայութեան իր պապենական հողերէն տեղահանումէն ետք, որ պատահեցաւ Մարտ 21ին, ալլ 100,000 տոլար մը դրկուած էր Քեսապահայութեան համար:

Համերգը սկսաւ Արամ Խաչատուրեանի գործերու փունջով մը Արմէն Ահարոնեանի կողմէ նուագուած դաշնակի վրայ եւ իր նուագախումբին ընկերակցութեամբ: Զեռնարկի հանդիսավարութիւնը կատարեց արուեստագիտուհի-հեռուստալրագրող Նունէ Աւետիսեանը իր բացման խօսքը սկսելով Վահան Թէքէեանի «Կ'անձրեւէ Տղաս»-ով»

Բայց կու լաս, տղա՛ս- Մուրիմ մէջլակարծ
Ծանր արցունքներ աչքէդ կը գործին...

Լա՛ց անմեղուքեան արցունքը անդարձ,

Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգէտ տղա՛ս,

Խեղճ որսը կեանքին, ա՛հ, լա՛ց, որ մեծնաս...:

Աւետիսեանը շնորհակալութիւն յայտնեց ներկայ բոլոր հանդիսատեսներուն, ինչպէս նաեւ սիրայօժար կերպով համերգին մասնակցող բոլոր արուեստագէտներուն: Ան Պարոյր Սեւակի խօսքերով հաստատեց հայ ժողովուրդի կամքը՝ «Կա՛նք: Պիտի լինենք: Ուղեւ... շատանա՛նք»:

ՄԱՐՖի Գործադիր Մարմնի ատենապետ Զաւէն Խանճեանը խօսք

առնելով յայտնեց, «Սուրիական տագնապի երկունքէն ի վեր, երրորդ անգամ ըլլալով հաւաքական ուխտով եւ զօրակցութեան փայլուն եւ հրաշալի արտայայտութեամբ, հաւաքուած ենք՝ խուռնեւորամ անգամ մը եւս հաստատելու եւ բարձր աղաղակ հաւաստիացնելու՝ պատնէշի վրայ, թէեւ արիւնաքամ, տեղահան եւ հարկւումեայ եղեռնը յուշող, կենցաղային անմարդկային պայմաններու տակ կոտորացող վէրքով, բայց տակաւին դիմադրող, դիմացող եւ տոկացող, մեր սուրիահայ ազգակիցներուն՝ թէ՛ մենք հո՛ս ենք: Թիկունք ենք մենք»:

Ան աւելցուց, «Մենք, երկրագունդի վրայ ծփացող զաւակները Հայկեան ցեղի, իրաւունք չունինք ցեղասպանութեան հարկւումեակ ոգեկոչելու եթէ հաւաքաբար մեր կամքի դնդերներու ամբողջ ուժգնութեամբ, չպայքարինք տեղահան Քեսապցիին վերադարձնելու իր պապենական մայր հողին եւ կամ բնաջնջումի վտանգէն փրկելու մեր Սուրիահայ բոլոր ազգակիցները»:

Զեռնարկին ներկայ էին ՄԱՐՖի մաս կազմող եկեղեցիներու ղեկավարները՝ Առաջնորդներ Մուշեղ արք. Մարտիրոսեան եւ Յովնան արք. Տէրտէրեան, Անտոն Ծ. Վրդ. Ադամեան եւ Վերապատուելի Հենտրիք Շահնազարեան: Մօտակայ շրջաններէն ներկայ եղող կղերականներու կողքին Պոլիսէն ներկայ էր Հայոց Պատրիարքարանի Կրօնական Ժողովի ատենապետ Թաթուլ Ծ. Վրդ. Անուշեան: Նաեւ ներկայ էին կազմակերպչական ներկայացուցիչներ՝ Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեանէն՝ Անի Քէշիշեան եւ Շրջանա-

Շաբ.ք էջ 18

«ԿԱՅԾ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆԱԾ «ՈՒՂԵԼՈՐՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՄԷՋ

Մեծ Եղեռնի 99րդ տարելիցին առթիւ «Կայծ» Երիտասարդաց Միութիւնը, իր յարգանքի տուրքը մատուցած էր ապրիլեան եղեռնին նախաձեռնելով «Ուղեւորութիւն դէպի Արեւմտեան Հայաստան» ֆիլմի ցուցադրութեան, որ տեղի ունեցաւ Ուրբաթ Ապրիլի 25ին 2014, Կլէնտէյլի Հանրային գրադարանին մէջ, խուռնեւորամ բազմութեան մը ներկայութեան:

«Կայծ» Երիտասարդացի անունով օրուան հանդիսավար Գրիգոր Մոլոյեան ոգեկոչելով մեծ Եղեռնի 99րդ տարելիցը ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յօտնկայս լուրթեամբ յարգելու մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը: Ան բուռն կերպով դատապարտեց Օսմանեան պետութեան հայաջինջ քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ իրտողանի մետասաներորդ բոլէշին յայտնած ցաւակցութիւնը: Միաժամանակ ամերիկեան գոնկիւնսէն պահանջեց ցեղասպանութեան ճանաչում եւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատի հատուցում: Այնուհետեւ կարդաց «Ուղեւորութիւն դէպի



Յարութիւն Ֆօտուլեան

րունդը իրագեկ դարձնել մեր արմատներուն, երբեմնի մեր աւաններուն եւ տարածքներուն մասին, որոնք հազարամեակներ շարունակ հայաբնակ վայրեր եղած են:

Աւելի քան մէկ ժամ տեւող այս շահեկան ֆիլմի ցուցադրութիւնը սկսաւ Պոլիս քաղաքէն, հայութեան երբեմնի մշակութային օրրանէն, որ իր ազգային, կրթական, կրօնական եւ ալլ փառապանծ հաստատութիւններով,



Արեւմտեան Հայաստան» ֆիլմի հեղինակ շնորհալի արուեստագէտ Յարութիւն Ֆօտուլեանի հակիրճ կենսագրականը:

Նախքան ֆիլմի ցուցադրութիւնը, Յ. Ֆօտուլեան համառօտ կերպով բացատրեց այս պատմավաւերագրական ֆիլմի պատրաստութեան տուն տուող պատճառներուն մասին, որ ուրիշ բան չէ քան հայրենասիրական մղում մը, նպատակ ունենալով հայ նորահաս սե-

հանդիսացած է բոլորի ուշադրութեան առարկան ու պարծանքը: Արդարեւ Ոսփորի Նեղուցի գեղածիծաղ ափին հասակ առած հոյակերտ պալատները, դղեակներն ու երկնասլաց գեղակերտ մինարէներով մզկիթները ցուցումն են Պալեան գերդաստանի եւ Սինանի ճարտարապետական անգերազանցելի յղացքներուն, որոնք փառքը կը կազմեն Օսմանեան կայսրութեան:

Շաբ.ք էջ 19

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975

More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd, Suite 1900
Los Angeles, CA 90048

805 East Broadway
Glendale, CA 91205

300 N. Lake Ave, Suite 500
Pasadena, CA 91101

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning

- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

Seniors 65 & Up

Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Insurance coverage can help you financially!

Ապահովագրութիւնը Աճիրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ
ԱՊՐԻԼ 24Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ
ԵՒ ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ՝

ՊՕՂՈՍԾ ԳՈՒԲԵԼԵԱՆ

Հինգշաբթի 24 Ապրիլ յետմիջօրէին, Հրաչին հետ ճամբայ ելանք ներկայ գտնուելու՝ Հայոց Յեղասպանութեան 99րդ տարելիցին նուիրուած շատ յուզիչ ոգեկոչման հանդիսութեան, կազմակերպութեամբ՝ UCSD համալսարանի հայ ուսանողութեան: Հրաչը երկու տարի առաջ, նոյն համալսարանին մէջ Ապրիլեան ոգեկոչման գլխաւոր բանախօսը եղած էր, իսկ անոր հայրը՝ տասնըհինգ տարիներ առաջ:

Երեկոյեան ժամը 7:30ին, հանդիսավար Վահէ Լէփէճեան, բացումը կատարեց հանդիսութեան ու մօտ 300 ներկաներ յոտնկայս մտիկ ըրին ամերիկեան ու հայկական զոյգ օրհներգները: Ապա Տէր Տաթեւ Թաթուլեան օրհնեց ներկաները ու ոգեկոչեց Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն հայ զոհերուն յիշատակը, վերջիշելով նաեւ հրեաներուն ու տարբեր ազգութիւններու ցեղասպանութեան զոհերը: Գլխաւոր բանախօսներն էին Սան Կապրիէլ Վալիէն՝ Նարէ Բիւփէլեան եւ Սամ Սիմոնեան, Թէքսաս, Տալլասէն: Հրաչ Գուբեյեան բովանդակալից կերպով ներկայացուց Սիմոնեանին անձն ու գործը:

Երկու ժամ տեւող յայտագրի ընթացքին եղան երգեր, նուագ, ասմունք ու տրամախօսութիւն, համալսարանականներու կողմէ:

Ասմունք՝ Նոնա Ակոբեան: Մելինէ Գրիգորեան, դաշնակի վրայ՝ Արման Սահակեան: Երգ՝ Նաթալի Ավուճեան, Սօսէ Արամունի եւ Արա Տապանճեան: Պար՝ Փաթիլ պարախումբ եւ Նաթալի Փոստալճեան: Նուագ՝ Արման Սահակեան: Տրամախօսութիւն՝ Լիւսի Ու-

նանեան եւ Ամանտիփ Գահլոն: Յուզիչ՝ որակեցինք երեկոն, ելլելով այն իրողութենէն, թէ հայ ուսանողութիւնը անթերի ոգեկոչման հանդիսութիւն կազմակերպած էր եւ սիրտը դրած էր անոր մէջ: Գալով զոյգ բանախօսներուն, բարեբախտաբար, երկուքն ալ լալկան շեշտն ու ախ ու վախը բացառելով, բոլորովին արդիական շունչ տուած էին իրենց խօսքին բովանդակութեանը ու երիտասարդ սերունդին փոխանցելիք պատգամին:

Գլխաւոր բանախօս գործարար Սամ Սիմոնեանը, իր հաշուարկուած անկեղծ խօսքը ցեղասպանութեան տխրաթախիժ պատկերներով չխճճեց: Այլ գործնական հայրենասիրութեամբ, իր եւ կնոջը հիմնած Թուժօ Կեդրոնի գործունէութեան անդրադարձաւ, շեշտը դնելով Հայաստանէն դուրս վտանգաւոր համեմատութիւններ ստացած արտագաղթը կասեցնելու միտող անոր հայրենասիրական առաքելութեանը: Անիկա հայրենաբնակ ու Սփիւռքի ունեւորներուն հասցեագրուած իր խօսքով, փորձեց շատ կարեւոր պատգամ մը փոխանցել անոնց՝ «Եթէ կ'ուզէք որ հայրենաբնակ հայը օտար հորիզոններ չգաղթէ, փոխանակ ձեր շահոյթը ամբողջութեամբ արտասահման ներդրելու՝ Հայաստանի մէջ արդիական շահաւէտ գործատեղիներ բացէ՛ք, ապրուստի ու արժանաւոր կեանքի պայմաններ ստեղծելու տեղաբնակ հայուն, իմ եւ կնոջ օրինակէն օգտուելով...» Հանդիսութեան աւարտին բակին մէջ, մոմավառութեան արարողութիւն տեղի ունեցաւ ներկաներու մասնակցութեամբ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՑԻՆԵՐՈՒ ՌԵՇԱԴՐՈՒԹԵԱՆ



Նստած՝ ձախէն աջ – Արա Ահարոնեան, Մէյրի Նաճարեան, դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան, Յասմին Շաքարեան – Անեմեան Ուֆի՝ ձախէն աջ – Գրիգոր Գիգիւրեան, Մարի Թիւթեյեան, Գէորգ Պետիկեան, Շաբէ Սաղտեան, Ճանիկ Գալսեան

Սփիւռքի տարածքին մեծ ու բարերար դերեր ունեցած են հայրենակցական մեր բոլոր միութիւնները: Իրենց պապենական հողերէն եւ տուներէն վտարուած մեր ժողովուրդը, օտար երդիքի տակ հագիւ ինքզինք գտած, անմիջապէս իր հայրենակիցներուն միանալով, մտածած է իր կարելի բոլոր միջոցներով, կենսական ապրուստի եւ ուսման կարօտեալ իր միւս հայրենակիցներուն գործնականապէս օգնութեան ձեռք երկարել:

commissioned by the Ottoman sultans to Armenian architects, most notably builders of the Balyan family. Well known landmarks of Istanbul, such as the imperial palaces of Dolmabahçe and Beylerbeyi, are attributed to the Balyans, as are several significant mosques along the Bosphorus. “

“One of my predecessors, Gabriel Noradunkyan, served as foreign minister of the Ottoman Empire from 1912-13 and was a prominent Armenian figure in international affairs,” stressed Davutoglu.

Ottoman Armenians, continued Davutoglu, “suffered greatly” during World War I. “The consequences of the relocation of the large part of the Armenian community are unacceptable and inhuman,” he said, underlining a softening of the decades-long Turkish policy of genocide denial.

But like Erdogan, the chief Turkish diplomat seemed to equate that to the wartime displacement and deaths of many Ottoman Muslims which he said are still not recognized by the outside world. “Could Turkish and

Armenian narratives not come closer together, could a ‘just memory’ not emerge?” he said. “Believing this can happen, Turkey proposed a joint commission composed of Turkish and Armenian historians to study the events of 1915. The findings of the commission, if established, would bring about a better understanding of this tragic period and hopefully help to normalize our relationship.”

The creation of such a body was envisaged by Turkish-Armenian normalization protocols which Davutoglu signed with his Armenian counterpart Edward Nalbandian in 2009. Ankara makes their ratification by Turkey’s parliament conditional on the resolution of the Nagorno-Karabakh conflict. Erdogan reaffirmed this precondition, rejected by Yerevan, during a recent visit to Azerbaijan.

Davutoglu said that Ankara now sees an “opportunity to recapture the engagement and conciliation that eluded us in 2009.” “The [April 23] statement by Prime Minister Erdogan is an unprecedented and courageous step taken in this direction,” he wrote in “The Guardian.”

Official U.S. Government Policy on Karabakh

Continued from page 1

controlled districts around Karabakh.

“The United States has pressed both leaders to meet again soon and take advantage of this window of opportunity when peace is possible,” Warlick said. He cited no possible dates for the next Armenian-Azerbaijani summit.

The envoy further indicated that the U.S. intends to continue to work with Russia in trying to broker Karabakh peace despite Moscow’s deepening confrontation with the West resulting from the crisis in Ukraine. “We intend to continue working through the Minsk Group as the primary channel for resolving this conflict. Together with France, the United States

and Russia share a common commitment to peace and security in Nagorno-Karabakh,” he said in remarks posted on the websites of the U.S. embassies in Baku and Yerevan.

Warlick revealed in that regard that he and the fellow co-chairs from Russia and France plan to again visit the conflict zone next week.

The diplomat addressed the U.S. think-tank a week after being accused by Azerbaijan of pro-Armenian bias. A senior Azerbaijani official said that Baku will demand Warlick’s replacement because he has been “deliberately taking steps aimed at satisfying the interests of the Armenian side and promoting separatism.” Armenian and Karabakh officials dismissed these allegations.

«ՎԵՐՔԸ ԽՈՐՈՒՆԿ Է...»

ՀՐԱՅՐ ՃէՊէճեԱն

«Դիտէ՛ դուն ալ տղաս ու օրին մէկը երբ մեծնաս, գուցէ կը գրես տեսածներուդ մասին»:

Հօրենական մեծ մայրս՝ Եւնիկէ Գունտագճեան- Ճէպէճեան՝ 1916-ին իր անդրանիկ գաւկիին Ռոպերտին (հօրեղբայրս՝ հետագային բժշկապետ Ճէպէճեան)՝ որ հազիւ եօթը տարեկան էր, ձեռքէն բռնելով կը տանի գինք Հալէպի հոգեւտունի շրջանը: «Կ'ուզեմ որ քաջութիւնը ունենաս տեսնելու թէ ինչպէս հոգեւտունի բակին ու հարեւան նրբանցքներուն մէջ գիշերով մահացած գաղթականներու դիակները սալլի մէջ բեռցնելով կը տանին հասարակաց փոսը նետելու: Դիտէ՛ դուն ալ տղաս ու օրին մէկը երբ մեծնաս, գուցէ կը գրես տեսածներուդ մասին»:

Եւնիկէ Ճէպէճեանի «Քաջութիւնը» իր գաւկիին ցոյց տալու հայերու անշնչացած մարմինները՝ եթէ մէկ կողմէ հայուն Յեղասպանութեան ահաւորութիւնը ցոյց տալ է՝ բայց նաեւ անոր վերապրելու հրամայականին:

Եւնիկէի քաջութիւնը կը շարունակուի: Նկատի ունենալով որ ամուսինը Օսմանեան բանակի մէջ բժիշկ-գինոկոորական էր՝ կրցած էր իր տան մէջ Հալէպ՝ պահել մեծ թիւով ազգակիցներ ու փախստական տարագիրներ՝ որոնք այլապէս ենթակա էին Տէր-Չօր քուլելու: Եղած է ատեններ որ վտանգը աչքը առած՝ ան պահած է աւելի քան քսաներեք հայորդիներ իր տան մէջ: Ու տակաւին՝ ան յաճախ կ'այցելէր գաղթակայաններ՝ Հալէպի տարբեր շրջանները՝ հագուստ բաժնելով եւ սնունդի մատակարարման կարգադրութիւններ ընելով: Եւ որպէսզի ոստիկանութեան ուղադրութենէն խուսափի՝ ինք-գինք կը ծածկէր սեւ լաչակով որպէս մահմետական կին...:

Եւնիկէի քաջութիւնը եթէ նկարագրային է՝ բայց նաեւ արդիւնք է իր ապրած փորձառութեանը...: 1909-ի եւ 1915 Յեղասպանութեան օրերուն՝ կորսնցուցած է աւելի քան 25 հարազատ իր ընտանիքէն՝ ներառեալ հայրը եւ երեք եղբայրները ...:

Ու կրտսեր եղբօրը՝ Ռոպերտին քստմնելի ոճիրը ...: Բայց արդեօք ո՞ր մէկ ոճիրը քստմնելի չէր այդ արհաւիրքի օրերուն ...:

1909: Եւնիկէի կրտսեր եղբայրը՝ Ռոպերտ 14 տարեկանին գիւղին մէջ (Հասան Պէյլի) պահելը ապահով չէր թուեր ըլլալ: Ռոպերտի մայրը՝ գրպանը հինգ դահեկան դնելով՝ կը պատուիրէ որ լեռները ապաստանած բազմութիւններուն միանայ գիւղէն դուրս: Ռոպերտը իր օրերը կ'անցնէ լեռներուն մէջ պահուստելով տարբեր տեղեր: Շրջան մը ետք՝ լուրեր կը տարածուէր որ հաստատուած է ապահովութիւնը՝ եւ լեռները ապաստանած խումբ մը հայեր ներառեալ Ռոպերտը՝ վար կ'իջնեն եւ կը սկսին ուղղուիլ դէպի Պախճէ գիւղը: Բայց ճամբան կը հանդիպին խումբ մը գինեալներու՝ որոնք իրենց վրայ յարձակելով կը սպաննեն խումբի անդամները: Ռոպերտը՝ վիզէն վիրաւորուած՝ արիւնլուալ կ'իյնայ դիակներուն մէջ կիսամեռ: Ձինեալներուն մէկնուածէն ետք, ուշքի գալով եւ վիզի վէրքը կապելով իր գօտիով, կը պահուրտի Գուլիա կոչուած մօտակայ գիւղի մը ջաղացքին մէջ: Բայց թուրք



գինեալները կը մտնեն նաեւ ջաղացք եւ դուրս կը հանեն վիրաւոր Ռոպերտը...: Ռոպերտ կալանուած վիճակի մէջ՝ կը պաղատի գինեալներուն որ խնայեն իր կեանքը...: Կը խոստանայ մօրը կողմէ իրեն տրուած հինգ դահեկանը եւ այլ իրեր իրենց տալու: Ու տակաւին կ'աղաչէ իրենց, որպէսզի գինք յանձնեն իր երէց եղբօրը՝ Տօքթ. Ֆիլիփ Յովնանեանին, որ ծանօթ բժիշկ է, եւ որ կրնար գիրենք առատապէս վարձատրել ու ձրիաբար խնամել. ...: Ռոպերտի աղաչանքը կը մնայ անօգուտ: Ձինեալներու խմբին մէջէն՝ Չոպան կոչուող «հէշ»ը, գէնքը կը պարպէ Ռոպերտի գլխուն ...:

Ռոպերտ գետին կը փռուի ու կը մեռնի անթաղ ...: Ժամանակ մը ետք՝ գիւղացիները կը գտնեն Ռոպերտի ոսկորները իր հագուստներուն կից ...:

Բայց պատմութիւնը տակաւին պիտի շարունակուի ...:

Եւ ինչքան իրական է ժողովրդային ասացուածքը որ կ'ըսէ «Լեռներ իրար չեն հանդիպիր՝ բայց մարդիկ այդ ...» եւ պիտի սպասել հանդիպումը Տօքթ. Ֆիլիփ Յովնանեանի եւ Չոպան՝ իմ մահ «հէշ»ին միջեւ ...:

Տօքթ. Ֆիլիփ Յովնանեան ուսանած էր Տարսոնի Գոլէճին մէջ՝ որմէ ետք անցած էր Սիրիըն Փրոթեսթընթ Գոլէճ (այժմ Ամերիկեան համալսարան) Պէյրութ՝ եւ մասնագիտացած որպէս բժիշկ: Ան իր մականունը Գունտագճեանէ փոխած է Յովնանեանի, նկատի ունենալով որ ան իր մեծ հօր անունով արձանագրուած էր: Բայց նաեւ՝ «Գունտագ» կը նշանակէր գէնքի կոթ՝ ինչ որ կրնայ զգայնութիւններու դուռ բանալ այդ օրերուն ...:

Տօքթ. Ֆիլիփի հայրը՝ Վեր. Յակոբ Գունտագճեան, կ'ուզէր որ իր որդին բժիշկ դառնար եւ գիւղին մէջ ծառայէր: «Ես կ'ուզեմ որ տղաս բժիշկ դառնայ եւ իր ժողովուրդին ծառայէ գիւղին մէջ՝ ուր բժիշկ չկայ»: Եթէ Ֆիլիփ որոշ ժամանակ մը «ենթարկուեցաւ» հօրը կամքին, բայց ստիպուած եղաւ մեկնիլ Այնթապ՝ երբ հրաւէր ստացաւ կատարելագործելու իր մասնագիտութիւնը այդ օրերուն հուշակ առած Տօքթ. Շեփըրտի հիւանդանոցին մէջ: Եւ Այնթապ երթալու որոշումը խնայեց Ֆիլիփի կեանքը՝ մինչ հայրն ու իր ընտանիքէն քսանհինգ անդամներ սպաննուեցան Ատանայի կոտորածներուն ժամանակ եւ Հասան Պէյլի

Շաբ.ը էջ 19

ՈՎ ԻՆՉ ԱՆԻ, ԻՐԱՆ Կ'ԱՆԻ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Գարնան օր, երկինքը պարզ, արեւը զաղջ, մէկ օր առաջ էր անձրեւել, բնութիւնը թարմ բուսականութեամբ կանաչին էր տալիս արեւի մեղմ ճառագայթների տակ: Կարելի՞ է՝ մարդու կեանքը մշտական զարուհ լինի, մտքովս անցաւ եւ ինքս ինձ պատասխանեցի,- չեմ կարծում, եզրակացրեցի՝ կեանքն էլ տարուայ եղանակների պէս փոփոխական է, աւելի ճիշտ ճամբի է նման, մերթ հարթ հաւասար ծաղիկներով եւ ծառերով եզերուած գեղեցիկ ու զովասուն, մերթ՝ զառիվեր խոշոնդոտներով... անհանգստացնող, երկու դէպքում էլ ոչ անհատը թող հպարտանայ եւ ոչ էլ՝ յուսահատուի:

Ահա այսպիսի մի օր, առաւօտեան ոչ կանուխ, քայլում եմ դէպի հանրակառքի կանգառը, տեսակ-տեսակ մարդիկ էին սպասում, հանրակառքը շատ չուշացրեց, տեղաւորուեցի բաց աթոռներից մէկում:

Լոս Անճելոսը իր շրջակայ քաղաքներում նկատելի են խայտաբղետ քաղաքացիներ աշխարհի տարբեր կողմերից, շատեր իրենց երկրների պատերազմներից խուսափած, ոմանք կրօնական խտրականութիւններից այս ափերը հանգրուանած, այլք անցեալից փախչող, կամ նոր եւ բարւօք կեանքի հետամուտ, ինչպէս նաեւ հարստանալու, բարձր ուսում ստանալու, ազատ կեանքով ապրելու եւ այլն զաղթել են այս երկիրը ապագայի վառ յոյսերով տոգորուած, բայց պէտք է ասեմ որ ամերիկան էլ իր լաւ ու վատ կողմերն ունի, ինչպէս այլ երկրներ: Ամերիկան չէ որ մարդուս երջանկացնում է, այլ մարդն է, որ իր կեանքը կառուցում է, արժանիքներով մարդը կարող է լաւ ապագայ ունենալ:

Հանրակառքը ֆութիլ պողոտայից դէպի Գլենդէլ ճամբու վրայ

էր, կանգառներում կանգ էր առնում, յաճախորդ նստեցնում կամ իջեցնում: Տեսայ մի մարդ զգզուած հագուստներ եւ կօշիկներ հագին վարձը արկղի մէջ մտցնելով, տուսիկ-փուսիկ ինքնամփոփ մեքենայի միջանցքից անցաւ եւ ետեւի աթոռի վրայ տեղաւորուեց՝ ոչ հեռու իմ տեսողութիւնից: Նրա իրանը ցնցոտիներով էր ծածկուած, իսկ վերեւը կոկիկ՝ կապարագոյն հարթ գլխամագով եւ ճերմակին տուող երկար միւրուքով, որը ինձ մտածմունքի մէջ զցեց, սրանից աւելի գէշ հագնուածքով Լոս Անճելոսի Down Town-ում էի տեսել, homeless-ների մէջ, բայց դրա նմանը մեքենայում երբեք չէի նկատել: Նա իմ ուղադրութիւնը գրաւեց, թերեւս տարիքը ոչ վաթսուներ անց, հասակը միջակ չափի, ոչ մեծ ձմերուկի կլորութեամբ դէմքին հայեացք նետելով քանի հարցեր ծնուեցին, ո՞վ էր նա, մուրացկա՞ն էր, բայց ոչ մուրացկանի եւ ոչ էլ մուրացողի տպաւորութիւն թողեց, ես հետաքրքրութիւնիցս մղուած հետեւում էի նրա շարժումներին, նա խելօք տեղում նստած, հայեացքը ապակուց դէպի դուրսն էր ուղղել մի տեսակ յուսակտուր կեանքի եւ շրջապատի նկատմամբ, ինչո՞ւ էր նա այս վիճակում յայտնուել, ի՞նչ նպատակ էր հետապնդում, իր թշուառութիւնն էր ուզում ի ցոյց դնել, ի՞նչ ասել կ'ուզէր, մարդս երբ չխօսի, ինչ իմանաս, ինչ է ուզելիքը, ուղեղս անկարող էր նրա մասին կարծիք յայտնել, միայն թէ ինչո՞ւ մարդ-արարածը իրեն այս նուաստացուցիչ վիճակում պիտի դնի: Էյ, սա էլ ճակատագրի մէկ խաղն է, կեանքի ապտակն է կամքով թոյլ մարդոց, կեանքը հազար ու մի տեսակ ոլորաններ ունի, զգուշ ու սթափ չլինելու դէպքում տարօրինակութիւնների է ենթար-

Շաբ.ը էջ 20



Մեծ Եղեռնի հնչակեան ցահատակ ԳԱՐԵԳԻՆ ԿՈՁԻԿԵԱՆ (ԵՍԱԼԵՍ)

ՏՈՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Մեծ Եղեռնի հնչակեան նահատակներու թանկագին շարքին կը պատկանի Գարեգին Կոզիկեանը՝ Եսալեմ: Մէկը, որ իր գիտակցական ամբողջ կեանքը նուիրեց աշխատաւոր դասակարգի ազատութեան եւ ընկերային արդար վարչակարգի մը կերտումի գաղափարին:


Գ. Կոզիկեան ծնած է Բալու, 1878-ին:

Նախնական կրթութիւնը կը ստանայ Ջարսանճագի դպրոցին եւ ապա խարբերդի Եփրատ Գոլէճին մէջ:

Խոյս տալով համիտեան ջարդերէն, 1896-ին կ'անցնի Անդրկովկաս: Թիֆլիսի մէջ որպէս բանուոր կ'աշխատի տարբեր գործարաններու մէջ: Կը ծանօթանայ բանուորական կեանքին եւ բանուորի ամէնօրեայ ցաւերուն. կը միանայ Հնչակեան Կուսակցութեան եւ կը մասնակցի բանուորական շարժումներուն:

Այդ շրջանը գաղափարական որոնումներու ժամանակաշրջանն էր: 1898-ին, Գ. Կոզիկեան, գաղափարական այդ որոնումներուն ճամբուն վրայ գտնուող հնչակեաններ՝ Գէորգ Ղարաջեանի (Ս.Տ. Արկոմեդ), Մելիք Մելիքեանի (Դեդուշկա), Ասատուր Կախոյեանի, Հայկ Աղամեանի (Փիլոսեան) հետ, Թիֆլիսի մէջ կը հիմնէ «Հայ Բանուորների Սոցեալ Դեմոկրատա կանխումբ»ը (ՀԲՄԴԽ): Այս խումբը բանուորութեան մօտ գաղափարախօսական քարոզչութիւն կատարելու կողքին, կը մասնակցի գործադուլներու եւ ցոյցերու կազմակերպման, «Թիֆլիսի Բանուորական Միութիւն» անուան տակ կը ստեղծէ ապահովագրական սնտուկ, որմէ կ'օգտուին բանուորները՝ գործադուլներու, հիւանդութիւններու եւ դժբախտ պատահարներու ժամանակ: ՀԲՄԴԽ-ը 1900-1901 թուականներուն կը հրապարակէ «Բանուոր» ընդլայնակեայ ձեռագիր թերթը: «Թերթի թէ խմբագիր եւ թէ հեռա-տպագրողներ Գարեգինն ու Հայկն էին».- Կը գրէ Ա. Կախոյեան իր յուշերուն մէջ: (1) 22-րդ թիւէն ետք «Բանուոր» կը խափանուի ցարական իշխանութեան կողմէ: 1901-ին ՀԲՄԽ-ի ղեկավարներէն շատեր կը ձերբակալուին ու կը բանտարկուին: Գ. Կոզիկեան երկու տարի բանտարկուած մնալէ ետք, որպէս օտարահպատակ կ'աքսորուի Ռուսաստանէն:

1903-ին կը հաստատուի Ժընեւ: Կը գործակցի Երուանդ Պալեանին հետ եւ կ'աշխատակցի անոր «Հանդէս» թերթին: Ե. Պալեան նախապէս անդամակցած էր Հնչակեան Կուսակցութեան եւ եղած անոր Պաքուի շրջանի կազմակերպիչներէն: Կուսակցութեան Ա. Համագումարին (1896, Լոնտոն) ընտրուած էր Կեդրոնական վարչութեան անդամ, բայց շուտով հրաժարած այդ պաշտօնէն (2): Աւելի ուշ, ան կը հեռանայ Հնչակեան Կուսակցութենէն եւ կը կազմէ «Հայ Սոցիալ Դեմոկրատիա» կոչուող ուսանողներու փոքր խնբակը՝ որ կը հրատարակէ «Հանդէս»ը: Թերթը կ'ունենայ իր սեփական փոքր տպարանը, ուր բացի «Հանդէս»ի հինգ թիւերէն, կը տպագրուին նաեւ սոցիալիստական բովանդակութեամբ գիրքեր, պրոշիւրներ, թուցիկներ: Գ. Կոզիկեան այդ տպարանին մէջ կը կատարէ գրաշարի



պարտականութիւնը: Ե. Պալեան իր հեռացումը Հնչակեան Կուսակցութենէն կը բացատրէ այն պատճառաբանութեամբ, թէ՛ Հնչակեան Կուսակցութիւնը Տաճկահայաստանի նուիրուած «Ազգային-ապստամբական կազմակերպութիւն է», մինչդեռ իր նպատակն է «Բոլոր հայաբնակ երկիրների մէջ սոցիալիստական փրօփականտայի եւ դասակարգային-կուսակցական կազմակերպութեան գործը սկսել իր սկզբունքների համեմատ» (3):

Նոյն թուին, Պաքուի մէջ խումբ մը դաշնակցականներ կը հեռանան Կուսակցութենէն եւ կը հիմնեն «Սոցիալ Դեմոկրատական Բանուորական Հայ Կազմակերպութիւն»ը (ՍԴԲՀ): Ե. Պալեանի եւ Գ. Կոզիկեանի ղեկավարած ժընեւի խմբակը կը միանայ ասոնց: ՍԴԲՀ-ն ժընեւի մէջ կը հրատարակէ «Բանուոր» թերթը (միայն մէկ թիւ) եւ ապա «Սոցիալիստ» ամսաթերթը: Կազմակերպչական բնոյթի տարակարծութիւններով, Ե. Պալեան կը հեռանայ ՍԴԲՀ-էն: Գ. Կոզիկեանի կողքին, կազմակերպութեան ղեկավարութեան մաս կը կազմեն, հասարակական կեանքին մէջ արդէն իսկ ծանօթ անուններ՝ Ալեքսանդր Ռուբէնին (Մատուրեան), Բախչի Իշխանեանը, Դաւիթ Անանունը (Տէր Դանիէլեան) եւ ուրիշներ:

ՍԴԲՀ-ն, երբ մէկ կողմէ կը հակադրուի ՍԴՀԿ-ին՝ զայն նկատելով «Ազգային-յեղափոխական», միւս կողմէ կը հակադրուի Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատ Բանուորական Կուսակցութեան (ՌՍԴԲԿ) մերժելով անոր բազմազգեան կառոյցը եւ գտնելով որ Ռուսաստանի բաղկացուցիչ ազգերէն իւրաքանչիւրը պէտք է ունենայ իր ուրոյն սոցիալիստական կուսակցութիւնը, որովհետեւ իւրաքանչիւր ժողովուրդ ունի իր իւրաքանչիւր (սպեցիֆիկ) պայմանները: Այս պատճառով ՍԴԲՀ-ն պատմութեան մէջ յայտնի կ'ըլլայ «սպեցիֆիկներ» անունով եւ ընդհանրապէս «սպեցիֆիկ»ը կը դառնայ գաղափարական այս մտածողութիւնը բնորոշող եզրը:

Այդ տարիներուն Գ. Կոզիկեան կը հետեւի բարձրագոյն ուսման եւ կը մասնակցի ուսանողական շարժումներուն:

1905-ին, Ռուսական Ա. Յեղափոխութեան օրերուն, Գ. Կոզիկեան գաղտնօրէն կը վերադառնայ Անդրկովկաս: Պաքուի մէջ կը զբաղի ՍԴԲՀ-ի կազմակերպչական գործերով: Կը մեկնի Թիֆլիս, եւ յաջորդաբար մաս կը կազմէ սոցիալ-դեմոկրատական ուղղութեամբ «Կեանք», «Ձայն», «Գործ» թերթերու խմբագրական աշխատանք-

ներուն, որոնց բոլորն ալ կը խափանուին ցարական իշխանութեան կողմէ:

1907-էն, Գ. Կոզիկեան կը գործակցի Տիգրան Ջալէնի (Չուգասգեան) հետ եւ կ'աշխատակցի անոր «Երկրի Ձայն» շաբաթաթերթին: «Երկրի Ձայն»ը կ'ունենայ իր ինքնուրոյն քաղաքական ուղեգիծը, որ սոցիալիզմի եւ երիտթրքականութեան իւրատեսակ խառնուրդ մը կը ներկայացնէ:

Տ. Ջալէն կը հաւատայ թէ համիտեան բռնակարգը տապալելու համար հայ կուսակցութիւններուն վարած ազգ.- ազատագրական պայքարի մարտավարութիւնինը սխալ է: Այդ նպատակին հասնելու համար պէտք է տանիլ ընկերային պայքար եւ յառաջ բերել բազմազգեան կառոյցով միասնական կուսակցութիւն մը: Եւ քանի որ երիտթրքական շարժումը իր զարգացման որոշակի աստիճանին հասած էր, Տ. Ջալէն «Երկրի Ձայն»ի միջոցով հայ կուսակցութիւններուն կ'առաջարկէ սերտ գործակցութիւն, ընդհուպ միասնականութիւն երիտթրքական շարժման հետ: Այստեղ, Տ. Ջալէն «Օսմանականութեան ջերմ հաւատաւոր մը ըլլալով» (4), ամբողջապէս կ'անգիտանայ որ այդ գաղափարախօսութիւնը շատ աւելի վտանգաւոր էր քան Ապտուլ Համիտը՝ իր բոլոր վայրագութիւններով: Այդ պատճառով ՍԴՀԿ-ը կտրականապէս դէմ կ'ըլլայ այս տեսութեան (5): Գ. Կոզիկեան, «Երկրի Ձայն»ին կ'աշխատակցի թրքահայութեան ընկերային վիճակը մեկնաբանող յօդուածներով: Իր «Ամերիկահայ Բանուորութիւնը Եւ Նրա Դերը» ուսումնասիրութեան մէջ, Եսալեմ նախ կը մեկնաբանէ ԱՄՆ-ի զարգացող դրամատիքական աշխատող ձեռքի համայնակուլ պահանջը ու թրքահայ չքաւոր գիւղացութեան դէպի ԱՄՆ արտագաղթի տեղական պատճառները: «Այն թիւրքը, քիւրտը, որի վրայ նախանձով էին նայում հալածուած քրիստոնեան, հայը, համարելով նրան բախտաւոր, երկրի տէրը եւ ազատ իրան բաժին ընկած զարհուրելի դրութիւնից, այդ միեւնոյն թուրքն ու քիւրտը՝ արդէն վերջին տարիներս՝ թողած իրանց հայրենիքն ու սիրելիները, գաղթում են հեռու, «կեանքների» երկիրը, աշխատանք ճարելու համար», կը գրէ ան ու կ'եզրակացնէ համատեղ ուժերով արտագաղթի տեղական պատճառներուն վերացման համար պայքարելու անհրաժեշտութիւնը (6):

1908 Մարտին, Թիֆլիսի «Կեանք Գրադարան»էն, Եսալեմի թարգմանութեամբ լոյս կը տեսնէ Կառուցիկ աշխատութիւնը Կարլ Մարքսի մասին (7):

Օսմ. Օսմանադրութենէն ետք, Կ. Պոլիս վերադարձող առաջին մտաւորականներէն կ'ըլլայ Գ. Կոզիկեան: Անոր առաջին նախաձեռնութիւններէն կ'ըլլայ «Օսմանեան Տպարանական Բանուորներու Արհեստակցական Միութեան» կազմութիւնը (ինք եւս կ'աշխատէր որպէս գրաշար)՝ «որի կանոնագիրը նոյնպէս եւ կազմեցի».- կը գրէ ան ու կ'աւելցնէ «Սոցիալ Դեմոկրատներու փոքր շրջանակ» մը արդէն կազմուած է ուր կը մասնակցին թուրքեր եւ հրեաներ:

Թուրք ազատական որոշ խմբակներ դիմած են ինձ եւ խնդրած են օգնել իրենց սոցիալ-դեմոկրատական ոգիով ծրագիր մը կազմելու: Մէկ խօսքով ձեռքերս ծալած եւ հանգիստ չնստեցի, կրցածս ըրի» (8): Ժամանակաշրջանի քաջատեղեակներէն Թէոդիկ (Թէոտորոս Լէպինճեան), այս արհեստակցական միութեան իրագործումներուն մասին կը վկայէ. «Դրամագլուխը կը սկսի աճիլ եւ միութիւնը հեղինակութիւն մը կը վայելէ գործաւորներու եւ գործատէրերու կողմէ: Աշխատանքի ժամերը 10-12-էն 8-ի կ'իջուցուին, վարձքերը կը կրկնապատկուին, երկուստեք յարուցուած խռչընդոտներ կը հարթուին եւ համանուն միութիւնը մեծ թափով կը շարունակուի մինչեւ 31 Մարտ 1909՝ Յետադիմական Շարժում. եւ ահա անգործներուն թիւը կը ստուարանայ, Միութեան օրինաց դէմ շարժողներ երեւան կ'ելլեն, որով՝ տպարանատէրեր աստիճանաբար կը սկսին ճնշել վերստին բանուոր դասակարգը՝ սահմանափակելով անոր ձեռք բերած իրաւունքները: Միութիւնը մեծ դժուարութեամբ կը շարունակէ իր գործը, ստիպուելով անձկացնել իր գործունէութեան սահմանը...Կոզիկեան այսպէս հիմնադիրն ու ղեկավարը եղած է գործին, նախագահն ու քարտուղարը մնալով միանգամայն, յետոյ երկարատեւ խորհրդատու, մինչեւ որ ուրիշներ կարող եղած են իրենց գործերն իրենք վարելու (9)»:

Գ. Կոզիկեանի յաջորդ քայլը կ'ըլլայ սոցիալիստական թերթի մը հրատարակութիւնը հայերէն եւ թրքերէն տարբերակներով (10): 1909 Մարտին իր եւ Հրանդ Արծուիկի (Նազարեան) խմբագրութեամբ լոյս կը տեսնէ «Նոր Հոսանք» շաբաթաթերթը, որ կը գոյատեւէ եօթը թիւ (յատկանշական է որ անոր կ'աշխատակցի նաեւ Ռուբէն Սեւակ):

1910-ին, Գ. Կոզիկեան կը վերամիանայ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան: Այդ մասին ան կը բացատրէ, թէ՛ երբ Ս.Դ.Հ.Կ. Համագումարը (1909, Կ. Պոլիս) կ'որոշէ դադրեցնել դաւադրական ընդլայնակեայ գործելաձեւը եւ կ'որդեգրէ քաղաքական-քարոզչական պայքարի ձեւը, Կուսակցութեան ծրագիրը իր համար կը դառնայ ընդունելի (11): Անմիջապէս, «Այս հոյակապ լրագրողը» (12) կը նշանակուի ՍԴՀԿ Կ. Պոլսոյ պաշտօնաթերթ «Ապագայ»ի խմբագիր: Կ'աշխատակցի նաեւ «Մանգումի էֆքիար»ին.

Իշխանութիւններուն կողմէ «Ապագայ»ի խափանումէն ետք, Գ. Կոզիկեան կը նշանակուի կուսակցական գործիչ: Իր այս պաշտօնով ան կը հաստատուի Տրապիզոն, ուր կը զբաղի ուսուցչութեամբ:

1911-ի ամառնային արձակուրդին, Գ. Կոզիկեան քարոզչական առաքելութեամբ կը գործէ էրզումի նահանգին մէջ: Կարինի մէջ հրապարակային ելոյթներ ունենալէ ետք կ'անցնի Քղի, ու կը կազմակերպէ գիւղացիները ցորենի աշարը (գիւղացիներուն վրայ բերքի տաճորդական տուրքը՝ որ բոլոր տուրքերէն ամենածանրն էր) (13) միւլթեգիմներու (կապալա-

Շաք.ը էջ 15



ԳԱՐԵԳԻՆ ԿՈԶԻԿԵԱՆ

Ծառունակուած էջ 14-էն

ռուներ) կամայականութիւններէն դուրս բերելու համարձակ ձեւ մը: Սա մեծապէս կը բարձրացնէ անոր հեղինակութիւնը: Նոյն Քդիի մէջ կը կազմակերպէ Շրջանային Պատ-գամաւորական ժողով, որ մեծապէս կը նպաստէ շրջանին մէջ հնչակեան կազմակերպչական կառոյցին զօրացման եւ գիւղերու միջեւ կապի ամրապընդման: Կ'այցելէ Զա-նաքճի, Օրօր, Թեմրան, Դերձան, Խուփս, Աստղաբերդ, Ապրողնակ, Առէք, Գեայլա, Աւդնիկ, Չանախճի եւ շրջանին մէջ գտնուող բոլոր հայ գիւղերը: Ընդունուած ձեւը այն էր, որ իւրաքանչիւր գիւղի եկեղեցիին կամ դպրոցի սրահին մէջ ան կը հանդիպէր գիւղացիներուն հետ, անոնց հասկնալի լեզուով կու տար դասախօսութիւն օրուան քաղաքական կացութեան մասին, կը լսէր անոնց ցաւերը եւ հնարաւոր չափով կը փորձէր լուծումներ գտնել անոնց: Այդ շրջա-նին, Հ.Յ.Դ.-ի կողմէ նոյն վայրերը որպէս կուսակցական քարոզիչ կը դրկուի Սիմոն Վրացեան: Հնչակեաններուն մօտ համոզում կը գոյանայ որ Հ.Յ.Դ.-ի այս քայլը Գ. Կոզիկեանի կատարած քարոզչա-կան աշխատանքին արդիւնքը չէ-զոքացնելու համար է: Կուսակցա-կան երկու գործիչներուն միջեւ կը տարուի քարոզչական աշխատանքի լուռ պայքար մը: Քդիի մէջ, երկու գործիչները կ'ունենան հրապարակային վիճաբանական հանդիպում (14): Սակայն միւս գիւղե-րուն մէջ այդպէս չըլլար: Օրինակի համար Չանախճիի մէջ, Ս. Վրացեանի համաձայն.- « ու սկսուեց մի ահագին իրարանցում, վէճ, հայհոյանք, աղմուկ: Այսօրուան պէս պատկերը աչքիս առջեւ է.- գիւղի ամբողջ ժողովուրդը հաւաքուած է գիւղին ծայրին: Կազմուել է երկու բանակ. մի կողմ հնչակեանները, միւս կողմ դաշակցականները, մէջ-տեղ՝ պարապ, կալը: Շուրջ տանիքները բռնուած են « չէզոք» բազմութեամբ, կանանցով ու երեխա-ներով» (15):

Իրենց հրապարակային ելոյթ-ներուն մէջ, Գ. Կոզիկեան շեշտը առաւելաբար կը դնէ գիւղացիներու ընկերային կարիքներուն հանդէպ իթթիհատական իշխանութեան անտարբերութեան վրայ, իսկ Ս. Վրացեան ամէն գնով սահմանադրական կարգերը պաշտպանելու գաղափարին վրայ:

Քարոզչական այս ներհակ պայքարը այնքան կը թէժժանայ եւ լարուածութիւնը կը սրի որ էրզրումի նահանգապետը կացութեան մասին տեղեկագիր մը կը յղէ ներքին գործոց նախարարութեան ուր կ'ըսուի.- «Մօտաւորապէս ամիս մը առաջ, Հնչակ Կոմիտէի անդամներէն Կոզիկեան անունով անձ մը, այստեղ քալով հայ ազգ. դպրոցին մէջ, իր կուսակցութեան քարոզչութիւնը կ'ընէ եւ ժողովներ կը գումարէ: Մենք, հասկնալով որ անոր տարածած գաղափար ներուն էութիւնը խորապէս կ'ազդէ անդորրութեան վրայ, նախազգուշա-կան միջոցներ ձեռք առինք: Եւ քանի որ Դաշակցութեան կողմէ հակազդեցութիւն տեղի ունեցաւ, յարմար գտանք ժողովի սրահին մէջ մի քանի ոստիկան տեղադրել: Հնչակեանները «Դաշակցութիւն կոմիտէին ծրագիրը քննադատու-թեան ենթարկելուն եւ դիմացի կողմէն ալ հակաճառուելուն պատճա-

ռով, երկար ըսի-ըսաւներու իրա-վիճակ մը ստեղծուեցաւ»(16):

Հակաիթթիհատական պայքա-րին մէջ բանաւոր քարոզչութեան կռքղին, Գ. Կոզիկեան կը գործածէ նաեւ իր սուր գրիչը: Այդ նպատա-կին համար ան լաչնօրէն կ'օգտա-գործէ ՍԴՀԿ Կ. Պոլսոյ պաշտօնա-թերթ «Նոր Աշխարհ» օրաթերթի էջերը: «(17) Երթաք Մարգարէք» վերնագրուած յօդուածին մէջ, Գ. Կոզիկեան կը գրէ.- «Մեր եւ Թուրք-իոյ բոլոր անկեղծ բարեկամներու կարծիքով, երկրին փրկութիւնը լայն դեմոկրատիք ռեժիմի մը մէջ պէտք էր տեսնել: Սակայն կառա-վարութիւնը ասոր հակառակ տե-սութեան մը կողմնակից կը թուի եւ եղածն ալ շատ կը տեսնէ: Իսկ հետեւանքը կը մտածէ արդեօք: Դուրսէն ուղղուած թնդանօթներու բերաններուն դէմ իր այդ օրինա-գիծերու տրցակները պիտի դնէ, թէ ժողովուրդի զաւակներուն ան-վէհեր կուրծքը: Եթէ վերջինը, ապա ինչ իմաստութիւն է ժողո-վուրդը զգուցնել, վշտացնել եւ զայն երկրի զօրավիգի ու պաշտպանի դերէն դէպի ըմբոստութիւն մղել: Կ'ուզէինք ասոր պատասխա-նը լսել երկրի ճակատագիրը իրենց ձեռքը բռնողներէն, բայց ոչ այն պատասխանը, որով բանտի դուռը կը մատնանշուի եւ կամ թերթի իմբագրութեան դուռը կը կնքուի»(18):

Անրադառնալով իթթիհատին հանդէպ քծնանքով խորհրդարա-նէն ներս աթոռ ապահովելու հա-մատարած երեւոյթին, Գ. Կոզիկեան իր «Միշտ Պատնէշի Վրայ» կծու յօդուածին մէջ կը գրէ.- «Չորս տարի խօսքով, գրչով, քննադատելին իթթիհատը, զայն ներ-կայացուցին չօվէն, շահագործողները Նովանաւորող,Թուրքիոյ բաղ-կացուցիչ ազգութիւններու իրա-ւունքները բռնաբարող, երկիրը դէպի կործանում տանող եւ այլն, եւ այլն: Իսկ հիմա, երբ պէտք էր քաջարի ժեստ մը, երբ գործնակա-նին մէջ պէտք էր ցոյց տալ իրենց ընդդիմադրութիւնը, ամէնքն ալ կը լգեն թքածնին, մտերմաբար կը շոյեն իթթիհատի կռնակը եւ բա-րեկամական խօսքեր կ'ուղղեն իր հասցէին: Դէպի հոն կ'ուղղէ իր քայլերը յեղափոխական ճոռոմաբանութեամբ ու մեծախօսութեամբ ալ ձանձրալի դարձած Դաշնակ-ցութիւնը, իր ետեւէն տանելով «ազատական» (Ազգ. Երեսփոխա-նական ժողովի Ազատական խմբակ-ցութիւնը.-Ե.Ճ.) յորջորջուող իրեմակցութիւնը, իթթիհատէն կարկանդակ կը յուսան վերակազմեալները, որոնց գոյութիւնը Թուրք-իայէն դուրս ամէն տեղ է... Թերթե-րու մէջ: Կեդրոնը Ազգ. Երեսփո-խանական ժողովի կեդրոն խմբակ-ցութիւնը.- Ե.Ճ.) եւ Սահմանադիր Ռամկավարը [երեսփոխանական] տեղի մասին «պազարլըխ» Կ'ընեն մերթ հնչակեաններու, մերթ դաշ-նակցականներու երեսին ժպտա-լով: Կաթոլիկները Թերզեանէ (Հայ կաթողիկէ համայնքի պատրիարքը, որուն պաշտօնագրկումին հա-մար այդ օրերուն ահագին աղմուկ բարձրացած էր,- Ե.Ճ.) մը ազատե-լու համար, իթթիհատին գիրկը կ'իջան: Բողոքականները «Ազգա-յին մեծամասնութիւնը ուր որ երթայ մենք ալ հոն ենք» կ'ըսեն, եւ այսպէս իրարու առջելով, իրար-մէ դաս առնելով ամէնքը ամբոխա-յին տրամաբանութեամբ մը կ'ուղ-ղեն իրենց քայլերը հոն, ուր նուազ

ջանքի, աշխատանքի, եռանդի, մա-նաւանդ կուռ պայքարի պէտքը կայ: Սկզբունքի բացակայութիւն՝ ահաւասիկ անոնց ուղն ու ծուծը...: Բայց այս ամէնքը կու գան ու կ'երթան, իսկ վաղուան պատմու-թիւնը կուտայ իր անկողմնակալ, անկաշառելի դատավճիռը: Եւ մենք չենք որ սեւերես պիտի ըլլանք անոր առջեւ»: (18)

Իր մէկ այլ՝ «Արթնցող Գի-տակցութիւնը» յօդուածին մէջ, Գ. Կոզիկեան երգիծական ձեւով կը ձաղկէ իթթիհատը գրելով. «Այ-լեւս ոչ մէկ վախ կրնանք ունենալ «Սահմանադրութեան» անուտով տեղի ունեցող ներկայ յետադիմական արտայայտութիւններէն, որուն դե-կավարը ու ներշնչողը կը հանդի-սանայ իթթիհատը»:(19)

Քաղաքական հեռատեսու-թեամբ մը նախատեսելով Պալքանեան Պատերազմը, Գ. Կոզիկեան իր «Իրականութիւնը Ի՞նչ կ'ըսէ» յօդ-ուածին մէջ, անդրադառնալով ներքին գործոց նախարար Ասրմ Պէյի «Տէյլի Քրոնիքը» թերթին տուած պատասխաններուն կը գրէ. «Ասրմ Պէյ թող գիտնայ, որ միայն իտալ-իան չէ Օսմանեան երկրին դէմ, այլ Պալքանեան փոքր պետութիւննե-րը արդէն սկսած են դաշնակցու-թիւն կազմել, որը անկասկած ուղղ-ուած է Թուրքիոյ դէմ: «Եւրոպա-կան նահանգներու» մէջ երբ թնդա-նօթները գոռան, ոչ մէկ ապահո-վութիւն կայ, որ այդ թնդանօթնե-րը պիտի չթնդան նաեւ Յունաս-տանի, Սերպիոյ, Գարատաղի, Պուլ-կարիոյ սահմանազխին վրայ»:(20)

Գ. Կոզիկեանի ազգային եւ ընկերային հայեացքները աւելի ամբողջականօրէն ըմբռնելու տե-սակէտէն, կարելի է ուշադրութիւն դարձնել Ազգ. Սահմանադրութեան 52-րդ տարեդարձին առիթով, որպէս Ս.Դ.Հ.Կ.-ի բանբեր անոր ու-նեցած ելոյթին: Ձեռնարկը, որ կազմակերպուած է Ազգ. Կեդրոնա-կան Վարչութեան կողմէ, բացօթեայ ճաշկերոյթ մըն էր, ուր ելոյթ կ'ունենան հայ կուսակցութիւննե-րու եւ տարբեր հոսանքներու ներ-կայացուցիչները: Գ. Կոզիկեան, իր ելոյթին մէջ կը գտնէ թէ Ազգ. Սահմանադրութիւնը կը դիմագ-րաւէ երկու բնոյթի վտանգներ: Արտաքին վտանգը, որ իշխանու-թիւններուն «բռնած ուղղութիւնն է, անոնց սկզբունքային վերաբե-րումը հանդէպ մեր այս սահմանա-փակ ինքնավարութեան...: Ներքի-նը՝ ազգային բնաւորութիւն կրող սիսալ գործելակերպն է»: Այդ սիսա-լով, ազգային իմաստով ինքնամ-փոփ եւ մեկուսացեալ կեանք մը վարելուն մէջ կը կայանայ, երբ, ընդհակառակն մենք պարտաւոր ենք ձեռք ձեռքի տալ համերաշխաբար գործել այն ամէն ազգութիւն-ներուն հետ, որոնք մեզի պէս, ազգային այդ իրաւունքները ձեռք բերելու եւ պահպանելու հետա-մուտ են: Դեռ այդ ալ բաւական չէ: Պէտք է նոյնիսկ տիրող ազգութեան ազատամիտ,յառաջադէմ, ընդդի-մադիր տարրերու օժանդակութիւնն ալ ապահովենք»: Գ. Կոզիկեան կը գտնէ թէ ազգամիջեան գործակ-ցութիւններ կարելի են, որովհե-տեւ, մինչ ճաշկերոյթին հաւաք-ուած ներկաները գարեջուր կը խմեն, քիչ անդին, գարեջուրի գործարանին բազմազգ աշխատա-ւորները, գործադուլ յայտարարած են, որովհետեւ գործատէրը մէկ օր անաջ, խուճեք մը աշխատաւորներ՝ հայ եւ Թուրք, անտեղի կերպով գործէ արձկած է: «Ո՞վ կրայ մերժել այս տեսակ միջազգային

(իմա՝ ազգամիջեան.- Ե.Ճ.) համե-րաշխութիւն ու համագործակցու-թիւն, որ կեանքի պահնաջն իսկ է».- հարց կուտայ ան (21):

Բանաւոր եւ գրաւոր քարոզչութեան կողքին, Գ. Կոզիկեան իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ ազգային-կուսակցական գործնա-կան կեանքին: 1912 Փետրուարին, Բերայի Եսայեան վարժարանին մէջ, խուռներամ բազմութեան մը ներկայութեան, հայ կուսակցու-թիւններու, համայնքներու եւ հոսանքներու ներկայացուցիչներուն միջեւ տեղի կ'ունենայ վիճաբանա-կան հանդիպում, յառաջիկայ երես-փոխանական ընտրութեան նիւթին շուրջ: Ս.Դ.Հ.Կ. կը ներկայացնեն Ս.Սապահ Գիւլեան եւ Գ. Կոզիկեան: Սա այն ժողովն էր, ուր վիճաբանութեան մաս նակից նե ըր հրապարակայնօրէն եւ միաբերան կը քննադատեն Ս.Դ.Հ.Կ.-ը, որ մերժելով իթթիհատին հետ դաշինք կազմել, կը խախտէր հայ ժողովուրդի միասնականութիւնը: Հնչակեան ներկայացուցիչները կը պատասխանեն. «Եթէ ձեզանով ներ-կայացող հայ ազգը համերաշխում է իթթիհատի հետ երթալու, մենք այդ աղէտաբեր համերաշխութիւնը պատառոտում ենք. եւ դա կը լինի մեր կուսակցութեան պատիւը»:(22)

Գ. Կոզիկեանի ձգած գրական ժառանգութեանէն կը յիշատակուին «Թող ֆակդերը խօսին» (23)» եւ «Հայ Գրականութեան Պատմու-թիւն» (24) 1913 գիրքերը:

Մեծ Եղեռնին Գ. Կոզիկեան եւս կը տարազրուի եւ աքսորի ձամբուն վրայ, իր կնոջ Ռոզիի հետ գետամոյն կը նահատակուի:

Շատ վերջերս, Թուրք ձախա-կողմեան մտաւորական Սաիւ Չէ-թինողլու, իր կայքէջին վրայ կը գրէր թէ սոցիալիզմի գաղափար-ները առաջին անգամ Թուրքիա բերողները եղած են հնչակեանները եւ այս իմաստով անոնք կը սեպուին իրենց ուսուցիչները: Այս առիթով ան կը յիշատակէր Գ. Կոզիկեանի անունը, որպէս Թուրք-իոյ մէջ արհեստակցական միու-թիւններու առաջին կազմակերպիչներէն:

Ուշացած բայց ընդունելի ծաղկեպսակ մը ջուրին յատակը գտնուող անոր ոսկորներուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1- Վարդան Աւետիսեան,«Հայ հասարակակամ մտփի գարգացման Մարքս-Լենինեան Փուլի Սկզբնաւորումը», Երեւան, 1976 էջ 294:

2- Արսէմ Կիտուր, «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան», Պէյրութ, 1962, էջ 271:

3- «Հնչակեան Կուսակցութիւն եւ Հայ Սոցիալ- Դեմոկրատիա (Առաջարկ Հնչակեան Կուսակցութեան 1903 Սեպտեմբերի Լոնտոնի Պատգամաւորական ժողո-վին)» Եր. Պալեան եւ Գ. Կոզիկեան, Ժընեւ, 1903 Սեպտ.14: Հնչ.արխիւ:

4- Anahide Ter Minassian «The role of the Armenian Community in the Foundation and the Development of the Socialist Movement in the Ottoman Empire and Turkey 1876-1923». Mete Tuncay and Erik Zürcher «Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923» p. 135:

5- Ստեփան Սապահ Գիւլեան, «Պատմախանգամանք», Բ. տպագր., Պէյրութ 1974, էջ 227-229:

6- «Երկրի Ձայն», 1907 Դեկտ. 30:

7- «Մշակ»,1908 Մարտ 11:

8- Գ. Կոզիկեանի մամակը Հ.

Ծառք էջ 19

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԹՆԳՈՒԿԸ

ՈՍԿԱՆ ՄԻՄԻԹԱՐԵԱՆ

Արդէն անցած են տաս ամիս–ներ այն դժբախտ եւ բարոյապէս հեղձուցիչ օրերէն որոնց դէմ յան–դիման եկաւ ամբողջ Ֆրանսահայ գաղութը, իր Թեմի առաջին Առաջ–նորդին՝ Նորվան Արք. Զաքարեա–նի անակնկալ հրաժարականով։

Փետրուար 15, 2014–ին տեղի ունենալիք առաջնորդական ընտ–րութիւնները յետաձգուեցան զա–նազան պատճառներով, հակառակ այն իրողութեան որ երեք թեկնա–ծուներու եռանուն ցանկը (Վիգէն Արք. Այգազեան, Զատիկ Վրդ. Աւե–տիքեան եւ Գրիգոր Աբդ. Խաչատր–եան) վաւերացուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ։

Առաջին հայեացքէն, ընթեր–ցողի մտքին մէջ անմիջապէս հարց կը ծագի թէ ինչպէ՞ս տարիներու «փորձառութիւն» ունեցող արքե–պիսկոպոսի մը (Վիգէն Սրբ.) մրցա–կից կը դառնան երկու նորափե–տուր անփորձ հոգեւորականներ, որոնցմէ մէկն ալ... արեղայ։ Անտա–րակոյս, երեւոյթը մեզի մտածել կու տայ որ եղածը պարզապէս բեմադրութիւն է, եւ հետեւաբար կրնանք բացայայտօրէն եզրակաց–նել եւ յայտարարել, որ Վիգէն Արք. Այգազեանն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի իսկական թեկնածուն, միւս անուններն ալ եկած էին լեցնելու «պարապ» մը։

Դժբախտաբար պատահեցաւ անխուսափելին։ Վիգէն Արք. Այ–գազեան հրաժարեցաւ թեկնածու–թենէ եւ խանգարեց ամբողջ ընտ–րական գործընթացը, եթէ անշուշտ կարելի է կոչել « ընտրական գոր–ծընթաց», որովհետեւ ամէն ինչ կը որոշէ եւ կը տնօրինէ Վեհափառ Հայրապետը, ինչպէս որ տեսանք իր գահակալութեան առաջին օրե–րէն։

Յիշեցնենք մեր ընթերցողնե–րուն որ նման թեմական կանոնադ–րութիւն մը գոյութիւն չունի եր–բեք, ուր կ’ըսուի թէ երբ թեկնա–ծուներէն մէկը հրաժարի, անհրա–ժեշտ է գործընթացը վերսկսիլ։ Պարզ հայերէնով կը նշանակէ՝ որ Վեհափառին թեկնածուն հրաժա–րեցաւ, հետեւաբար այս գործը պէտք է խափանուի ցնոր տնօրի–նութիւն եւ կամ մինչեւ որ Վեհա–փառը իր ուզած թեկնածուն Ֆրան–սահայ գաղութին կոկորդէն հեզա–սահ վար իջեցնէ...։

Անշուշտ անհրաժեշտ չենք տեսներ որ Ֆրանսահայ Թեմական Խորհուրդը պարտաւոր թեմական Խորհուրդը պարտաւոր զգայ հան–րութեան բացատրութիւններ տա–լու, որովհետեւ Հայց. Եկեղեցին այլեւս դադրած է մեր ժողովուրդի հաւաքական կեանքի մէկ անբաժան մասնիկը ըլլալէ, եւ հետեւաբար սահմանադրական ու ժողովրդա–վարական սկզբունքներու յարելէ, որովհետեւ մենատիրական եւ շա–հադիտական ախորժակներու դի–մաց՝ Սահմանադրական եւ Ժո–ղովրդավարական կանոնագրու–թիւններ կը խոչընդոտեն վերին իշխանութեանց անկաշկանդ, սան–ձարձակ ախորժակները։

Լաւ հասկնալու եւ ըմբռնելու համար ընդհանուր կացութիւնը, անհրաժեշտ կը նկատենք նախ վերլուծել թէ ինչո՞ւ հրաժարեցաւ Վիգէն Արք. Այգազեան (Հիւսիսա–լին Ամերիկայի Արեւելեան Թեմի Թեմական Պատուիրակ ի Ուաշինկ–թոն), շատերու այնքան երազած Թեմական Աթոռի թեկնածութե–

նէն։

Այստեղ մէջբերենք նոյն ինքն Վիգէն Արք. Այգազեանի կողմէ արտայայտուած միտքն ու պատ–ճառները. « Ինծի համար անսպա–սելի էր եւ նոյնիսկ մտքովս չէր անցնէր։ Իմ բարեկամներս առա–ջարկեցին եւ զիս մղեցին մտածե–լու թեկնածութեանս մասին։ Եր–կար մտածեցի, եւ նժարի վրայ դրի թէ՛ ժխտական եւ թէ՛ դրական կողմերը։ Երկար մտածելէ ետք պատասխանեցի։ Դժուարութիւն–ներու լոյսի տակ փորձեցի հաւա–նական լուծոմներու մասին հե–ռանկարներ ձեւաւորել մտքիս մէջ։ Վերջին հաշուով չկրցայ անտար–բեր մնալ, քանի որ գիտեմ որ Թեմը այստեղ դժուար կացութեան մէջ է։ Կացութիւնը կշռադատեցի թէ՛ իբրեւ մարդ եւ թէ՛ իբրեւ հոգեւորական։ Այս բոլորը հաշ–ուեկշռելով՝ որոշեցի յետս կոչել թեկնածութիւնս»։

« Ինծի համար անսպասելի էր եւ նոյնիսկ մտքովս չէր անցնէր» արտայայտութիւնը քիչ մը մեզի անակնկալի առջեւ կը դնէ եւ նաեւ շփոթութեան կը մատնէ։ Արդէն «վերէն» ապսպրուած եւ պատ–րաստուած էր ենթահողը, հետեւա–բար անակնկալ չէր կրնար ըլլալ որեւէ նման կոչ կամ երեւոյթ։ Արդեօ՞ք պէտք էր որ բարեկամներ առաջարկէին իր թեկնածութիւնը, թէ ինք որպէս կոչեցեալ եւ նուիր–եալ, պարտաւոր էր ծառայելու իր ազգին եւ եկեղեցիին։

«Դժուարութիւններու լոյսի տակ փորձեցի հաւանական լու–ծոմներու մասին հեռանկարներ ձեւաւորել մտքիս մէջ։» Արդ–եօք...։ Թէ՛ չփափաքեցաւ Ուա–շինկթոնի իր հանգիստը խանգա–րել, ուր թեմական ո’չ մէկ գլխա–ցաւանք ունի եւ ո’չ ալ պարտաւո–րութիւն։ Մէկ խօսքով ազատ, ան–կախ, հանգիստ կեանք։ Ինչո՞ւ գալ եւ ողջ գլուխը Աւետարանի տակ դնել, ինչպէս ժողովրդական առա–ծը կ’ըսէ։

«Վերջին հաշուով չկրցայ ան–տարբեր մնալ, քանի որ գիտեմ որ Թեմը այստեղ դժուար կացութեան մէջ է։» Եթէ իսկապէս այդ գիտակցութիւնը ունէր, հապա ին–չո՞ւ հրաժարեցաւ, նամանաւանդ յստակ գիտէր որ ինքն էր Ամենայն Հայոց Հայրապետի թեկնածուն եւ միւս թեկնածուները ոչինչով կրնա–լին խոչնդոտել իր ընտրութիւնը □ բեմադրութիւնը պատրաստուած էր, հողն ալ պարարտ...։

Շատ պարզ է եզրակացու–թիւնը. մտքին մէջ յստակ էր Թեմի կացութիւնը եւ շատ հանգիստ ալ կրնար անտարբեր մնալ, հակառակ իր արտայայտութեան։ Ի վերջոյ՝ ինչո՞ւ թողուլ Ուաշինկթոնի ազատ պայմանները եւ գալ իր քրտինքը խառնելու եկեղեցւոյ եւ ժողովուր–դի բարօրութեան համար։ Յանուն ինչի՞ր...։

Ահ որքան հակասական են իր արտայայտած մտքերը Փետրուար 14, 2014 թուականին, «Նոր Յա–ռաջ» թերթին հետ իր ունեցած հարցազրոյցին մէջ։ « Իմ կարծի–քով՝ բարձրաստիճան իւրաքան–չիւր հոգեւորական պէտք է մտա–հոգ ըլլայ երկիրով մը, ուր եկեղե–ցական տազնապ գոյութիւն ունի։» Եթէ իր ըսածին կը հաւատայ Վիգէն Սրբազան, եւ իսկապէս մտա–հոգ էր Ֆրանսահայ գաղութով, հապա ինչո՞ւ որոշեց հրաժարիլ։ Հետեւաբար՝ հարազատ եւ անկեղծ

չեն իր արտայայտութիւնները։

«Մեր մօտ գոյութիւն չունի ԿՂԵՐԱՊԵՏԱԿԱՆ հասկացողու–թիւնը, միշտ ալ եկեղեցականն ու աշխարհականը միասնաբար գոր–ծակցած են։» Տէր ողորմեա՛... Հա–պա ի՞նչ են բոլոր այն տազնապ–ները որ ստեղծուեցան վերջին տասնամեակին՝ Ժրնեւի, Նիսի, Մոսկուայի, Լոնտոնի, Մոնթրէալի, Սոֆիայի, Կալկաթայի մէջ, եւ դեռ՝ գալիքներէն գատ։ Այս բոլորը արդիւնք չէի՞ն մենատիրական, կղե–րապետական ախորժակներու։ Դուք կը հաւատա՞ք ձեր ըսածին, Վիգէն Սրբազա՛ն, թէ չրթունքի ծառա–յութիւն է որ կ’ընէք եւ ինկարկում Ամենայն Հայոց Հայրապետին։

« Ֆրանսայի Թեմի կանոնադ–րութիւնը անցաւ Եպիսկոպոսական Ժողովէն եւ թեմակալ ներկայացու–ցիչներն ու առաջնորդները անոր ի նպաստ քուէարկեցին եւ որուն ենթակայ են աշխարհի բոլոր թե–մերը։ Հետեւաբար այս հարցէն դուրս կը մնայ Կաթողիկոսը»։ Ինպէ՞ս համարձակիլ եւ ըսել որ այս հարցէն դուրս կը մնայ Կաթո–ղիկոսը։ Զէ՞ք կարծե՛ր որ մեղան–չում մըն է կատարուածը։ Ամե–նայն Հայոց Հայրապետը բազմիցս յայտարարած է, որ ինք պիտի որոշէ թէ ո՛վ պիտի ըլլայ Թեմի մը առաջնորդը։ Այլ խօսքով՝ Վեհա–փառը մեզի կը հասկցնէ որ, թեմա–կան կանոնագրութիւնները ո’չ մէկ նշանակութիւն ունին իրեն համար, եւ վե՛րջ։ Աւելորդ է այլեւս խօսիլ ժողովրդային մասնակցութեան եւ ընտրութեան իրաւունքներու մա–սին։ Եկեղեցին դարձած է մենատի–րական, անիշխանական կղերապե–տութիւն։

Վիգէն Սրբազան հակասական իր արտայայտութիւններուն մէջ կը փորձէ խուսափիլ իրեն ուղղ–ուած հարցումներէն, եւ Նիսի դժբախտ պարագան,□որ այլեւս ծանօթ է ամբողջ սիիւււքահայու–թեան, եւ որուն տխրահռչակ հովիւին՝ Վաչէ քահանային «պատիւը» պաշտպանած չըլլա–լուն համար Նորվան Արք. Զաքար–եան Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ հրապարակաւ պախարակ–ուած էր Փարիզի Օրլիի Օդակայա–նին մէջ,□ կը որակէ «հիւանդ գաղութ»։ Եւ որովհետեւ ինք չէ տեսած «հիւանդը», հետեւաբար բուժումներ չի՛ կրնար առաջար–կել...։ Նման անձնաւորութիւն մը անկասկած որ օգտակար պիտի չկրնար ըլլալ Ֆրանսահայ տազնա–պող գաղութին, բայց անկասկած օգտակար պիտի կարենար ըլլալ Ամենայն Հայոց Հայրապետին թա–քուն ծրագիրները իրագործելու...։ Մնացեալ վերլուծումներն ու եզ–րակացութիւնները կը թողում ըն–թերցողներուն։

Իսկ ամենազարհուրելին այն իրողութիւնն է երբ «Նոր Յառաջ» թերթի խմբագիրը Վիգէն Սրբա–զանին կը հարցնէ թէ ինք տեղեա՞կ է արդեօք որ նոր ծխական ընկե–րակցութիւն մը կեանքի կոչուած է Նիսի մէջ, եւ թէ նախկին՝ մօտա–ւորապէս ութսուն տարիներ առաջ օծեալ ու տակաւին գործող Ս. Աստուածածին եկեղեցին՝ կաթո–ղիկոսական հրահանգով, 26 Յուն–ուար 2012 թուակիր Գերազոյն Հոգեւոր Ժողովի որոշումով, Հայց. Առաքելական Եկեղեցւոյ կոչումէն զրկուա՞ծ եւ հետեւաբար Հայց. Եկեղեցւոյ անդամակցութենէն «հե–ռացուած» է,□ Այգազեան Սրբա–զանի խուսափողական պատասխա–նը կ’ըլլայ՝ «պէտք է մօտէն քննել նիւթը» ...։

Ահաւասիկ թեկնածու մը որ

շատ յաճախ խօսած է Նորվան Սրբազանին հետ, ինչպէս ինք կը վկայէ, յանկարծ կը դառնայ անգի–տակ ճշմարիտ իրողութեանց եւ կը խուսափի քաջաբար պատասխա–նելէ։ Փոխանակ կարկտան մեկնա–բանութիւններու եւ վերլուծում–ներու, Վիգէն Սրբազան քաջաբար պէտք էր յայտարարէր.□ Աննախա–դէպ տխրահռչակ երեւոյթ մըն է ասիկա մեր եկեղեցւոյ պատմու–թեան մէջ. ինչպէ՞ս կարելի է օծեալ եկեղեցի մը ՈԶ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ նկատել, որուն խորանին վրայ պատարագուած է ինքը Քրիստոս։ Այն ատեն միայն կրնար հերոսա–նալ որպէս պարկեշտ եւ գիտակից եկեղեցական։

«Նոր Յառաջ»ի խմբագրու–թիւնը հաւանաբար առիթը չունե–ցաւ միւս երկու թիկնածուներուն հետ հարցազրոյց կատարելու, բայց մենք հարկ կը նկատենք հանրու–թեան ծանօթացնելու միւս երկու հոգեւորականներն ալ, որոնք, ինչ–պէս վերեւ յայտարարած էինք, եկած էին լեցնելու «պարապ» մը եւ ուրիշ ոչինչ։

Զատիկ Վրդ. Աւետիքեան.– Նախկին Հոգեւոր Հովիւ Մարսէյի ու այսօր՝ հովիւ եւ հայրապետա–կան նուիրակ Պրիւքսէլի։ Իր մա–սին տեղեկութիւններ կը քաղենք իր ներկայի եւ անցեալի գործա–կիցներէն։ Մեզի փոխանցուած ստոյգ տեղեկութիւններէն կ’եզրա–կացնենք որ Զատիկ Վարդապետ ո’չ հովուական եւ ո’չ ալ վարչական կարողութիւններու տէր անձնաւո–րութիւն մըն է։ Երկու հովուական վայրերու մէջ ցոյց տուած է ան–հանդուրժողութիւն եւ իր «դաստ–իարակութեան» համաձայն փոր–ձած է անտեսել կանոնական սկզբունքները եւ ստեղծել եկեղե–ցական բռնատիրական համակարգ։ Ասկէ աւելին հարկ չենք նկատեր մանրամասնել։

Գրիգոր Աբդ. Խաչատրեան.– շատ բան կարելի է գրել այս «հերոս»ի մասին, որ վաղուց պէտք էր փիլոնագուրկ ըլլար իր կատա–րած սրբապղծութեան համար։ Դէպք մը որ ո’չ մէկ արդարացու–ցիչ պատճառ կրնայ ունենալ։ Որ–պէսզի մեր ընթերցողները ըլլան արդար դատաւորը, կը խնդրենք որ գիտեն YOU TUBEի վրայ արձանագրուած տեսաերիզը,(http : / / www.youtube.com / watch?v=kqQluCm2RSs) ուր այս «հերոս» արեղան, Ս. Պատարագը կիսաւարտ ձգելով, կը դառնայ բանկալին մօտ մոմավաճառութեան սեղանի վրայ նստած եկեղեցւոյ տարիներու սպասաւոր, ծխական խորհուրդի անդամ՝ Արամ Քար–թունին, եւ ամբարտաւանօրէն բարձրաձայն կը գոչէ. « Դո՛ւրս այդտեղէն, մինչեւ որ չհեռանաս, պիտի չշարունակեմ պատարագը» եւ այդպէս ալ կիսաւարտ ձգելով պատարագը, Սկիհը ձեռքին կը հեռանայ՝ հաւատացեալները ապ–շահար ձգելով։

Ահաւասիկ՝ Նորվան Արք. Զա–քարեանի բառերով, «բիզնէս» հո–գեբանութեամբ դաստիարակուած անկառավարելի եկեղեցական մը թեկնածու կը նշանակուի Ֆրանսա–հայ Թեմին։ Վա՛յ քեզ քաղաք որ թագաւորդ մանուկ է...։ Ինչ օրերու մնացիր, Հա՛յ ժողովուրդ։

Շատ ափսոս... Ինչ երազներ հիւսեցինք Հայրենիքի նորանկախ Հանրապետութեան վերահաստա–տումով եւ անոր անբաժան մասը կազմող Հայց. Առաքելական Եկե–ղեցւոյ դարաւոր արժէքներու, եղ–

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ ԷՆԿԵՐ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ

«Եթէ մի երեք այդպիսի Մուսա Լեռ

Լոյս ընկնէր, գործը այլ ընթացք կը ստանար։

Ա՛խ, Սրբազան, երանի՛ ես Մուսա Լեռան գազաթին լինէի»։

Եոհաննէս Լեփսիուս

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Մարունակուածնախորդ թիւէն)

Էնվէրը յարզանքով էր լսել Լեփսիուսի խօսքը, սակայն նրա դէմքի արտայայտութիւնում ոչ մի խորհուրդի ծալքի ստուեր իջել, ինչպէս նրա մարմինը պինդ գրկած համազգեստի վրայ։ Կերպարանափոխուել էր Միսիոնար Պատուելին, իր խօսքի արթնած հոգեկան յուզմունքից, բիւրեղիկների ջինջ հատիկների նման քրտինքն էր իջել դէմքին, առուակների նման հոսել դէմքի նուրբ կնճիռներից, անձկութիւնից փողկապն է մի կողմ հրել, բաճկոնի թեւքերը վեր քաշել։

–Ի՛նչ արած, յարել էր էնվերը, թուրքիան պատերազմից յետոյ տկար ստամոքս կ'ուճենայ։ Թուրքիայում քառասունն միլիոն թուրք ժողո՜վուրդ կայ, արդեօք քաղաքական մեծ ծրագիր չէ՞ր լինի այդ քառասուն միլիոնը համախմբել, ազգային պետութիւն հիմնել, որը Ասիայում նոյն դերը կը կատարէր ինչ որ Գերմանիան Եւրոպայում։ Հայերի մէջ սոսկալի շատ մտաւորականներ կան, եթէ դուք կողմնակից էք այդ կարգի մատաւորականներին, ես ոչ։ Թուրքերը նման մտաւորականներ քիչ ունեն, սակայն դրա փոխարէն հին ու հերոսական ցեղ են, որը կոչուած է մեծ կայսրութիւն հիմնել, որի համար խոչընդոտներ չաղթահարելով պէտք է բարձրանանք։

Ոչ մի բառ է արտասանել Լեփսիուսը, նրա խօսքից ջղաձգուել, ձեռքերը սեղմել։ Այդ փոքրիկ գլուխը այնպիսի թուեր է ասել, որից իրազեկ որեւէ մարդ պիտի ապշէր։ Նա գիտէր, որ Անատոլիաւում հազիւ թէ գտարիւն թուրք լինէր։ Եթէ հիւսիսային Պարսկաստանի, Կովկասի, Թուրքեստանի բոլոր վրանաբնակ ժողովուրդները եւ Եւրոպայի կէսի չափը գրաւող տափաստանների թափառող ձիագողերը միասին հաշուէին հազիւ քսան միլիոն կը լինէին։ Նրա այդ երազանքը՝ ազգամուլութեան թմրադեղի արդիւնք էր։

Լեփսիուսը, զգալով իրադրութեան ծանրութիւնը, շարունակել՝ կայսրութի՜ւն էք ուզում հիմնել, սակայն, նրա պատերի տակ մնալու է Հայ ժողովուրդի դիակը։ Արդեօք այժմ հնարաւո՞ր չէ, խաղաղ ճանապարհ ըրոնել։

Էնվէրը, իրենց կոմիտէի ճշմարտութիւնը բացայայտելով, դադարել ամօթխածութեամբ ժպտալ, մանր աչքերը հեռուն սեւեռել, պաղ ստուեր իջել աչքերի ցանցաթաղանթներին, գայլոյթով կանչել՝

–Մարդու եւ ժանտախտի ժահրերը բարեկամներ չեն կարող լինել։

Լեփսիուսը ընդհատել է նրա ասաւոր դժնդակ խօսքը, անմիջապէս յարել, որ նա խոստովանում է իրենց մտադրութիւնը՝ պատերազմի վիճակը օգտագործելով բնաջնջելու ամբողջ Հայ ժողովուրդը։

Էնվէրը զգալով, որ իր խօսքը հեռուներ էր տարել իրեն, փոխել է խօսակցութեան եղանակը, սկսել նորէն կեղծ բարեացակամութեամբ հանդէս գալ, յայտարարել, որ իր անձնական այդ կարծիքը ու մտադրութիւնը արտացոլուած են նաեւ կառավարութեան հրապարակած պեռական պաշտօնական հաղորդագրութիւնում։ Պատերազմը ու ինքնապաշտպանութեան անհրաժեշտուե

թիւնը հարկադրում են կառավարութեանը օրէնքի ամբողջ խստութեամբ պատժել այն քաղաքացիներին, որոնք ձգտում են կործանել պետութիւնը։

Լեփսիուսը ձեռքերը սեղմել էր լայն, զեղեցիկ ու խոհուն վսեմ ճակատին, շարունակել խօսքը, որ առանձին մարդկանց ու պարզապէս քաղաքականութեան պատճառով չի կարելի դատապարտել մի ամբողջ ժողովուրդի, եւ կանանց ու երեխաներին, մանուկներին, ամենազազանաչին մահուան ենթարկել, մի քաղաքականութիւն, որից նրանք ոչինչ են հասկանում։ Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում ձեր իսկ ժողովուրդի ու նրա ապագայի վրայ։ Պատերազմը կաւարտուի, Թուրքիան հաշտութիւն կնքելու անհրաժեշտութիւն կ'ունենայ։ Եթէ այն ձախորդ լինէր, այն ժամանակ ի՛նչ կը լինէր։ Իր ժողովուրդի հանդէպ պատասխանատութիւն կրող առաջնորդը պէտք է հոգայ իր անելիքի մասին։ Բանակցութիւնների ատեն ի՛նչ վիճակի մէջ կը լինէր հաշտութեան Օսմանեան յանձնաժողովը, եթէ նրան հարցնէին՝ «Ո՛ւր է քու եղբայր Աբելը»։ Յաղթանակած տէրութիւնները, թշնամու կատարած յանցանքի համար կը բաժանէին յաղթանակի աւարը։ Այն ժամ, պատասխանատութիւնը իր վրայ վերցրած ժողովուրդի մեծագոյն մարդը, ամենագօր մարդ էնվէր Փաշան ի՛նչպէս էր արդարանալու իր ժողովուրդի առաջ։

–Ով որ քաղաքականութեան ասպարեջգ է մտնում, երկու առանձնայատկութիւն պիտի ունենայ՝ արհամարանք մահուան նկատմամբ եւ անսասան հաւատք սեփական որոշումների հանդէպ, ասել էր էնվէրը։

Լեփսիուսը, ձեռքերը կուրծքին խաչած, ոտքի կանգնեց։ Հայ ժողովուրդի Աստուածառաք պահապան հրեշտակը, այլալուել էր գրոյցի խռովքից, գրպանից կախուել թաշկինակը, անդրավարտիքը ծնկերին իջել, փողկապը լրիւ ծռուել վերնաշապիկի մի կողմի վրայ, ակնոցի ապակիներն էին պղտորուել ակներից ծորած արցունքի անտես հատիկներից։

Խռովայոյզ Պատուելին խոնարհուել է Թուրք էնվէր Փաշայի առաջ, աղաչել նրան բաւականաալ մինչեւ հիմա կատարուածով, չշարունակել պատժել գոյութիւն չունեցող մի թշնամու։ Արեւելքի ճամբաներին հարիւր հազարաւոր մարդիկ մեռնում են։ Հրամայեցէք, որ տարագրութեան նոր կարգադրութիւնները չկատարուեն։ Բոլոր գաւառները, վիլայէթները դեռ դատարկուած չեն։ Ասացէ՛ք բաւական է, երբ Գերմանիա վերադառնամ կը փառաւորեմ Ձեր անուրը։

–Դուք գերազնահատում էք իմ իրաւասութիւնների աստիճանը Պարոն Լեփսիուս, ասել էր էնվէրը, կառավարութեան նման որոշումների կիրառումը տնօրինում է Ներքին Գործերի Նախարարութիւնը։

– Որոշումները կիրառում են ոչ նախարարը, ոչ ՄիւթեսարըՓը, այլ՝ անսիրտ, բիրտ ստորադասները, կրտսեր ենթասպաները, պատասխանել էր Լեփսիուսը։ Մի՞թէ Ձեր եւ նախարարի կամքն է, որ ճամբաներին փռուած կանայք մտրակներով առաջ քշուեն, եր-

կիրն ապականի նեխած դիակներից, Եփրատը մեռելներով լցուի, նրա ջրերը բարձրանան։

–Գնահատում եմ Ձեր գիտելիքները երկրի ներքին գործերի մասին յարել է էնվէրը, բաւականութեամբ կ'ընդունեմ այս գործի կարգաւորմանը նպաստող Ձեր գրաւոր առարկութիւնները, կը ստուգեմ այն։

Լեփսիուսը, ենթագիտակցութեան արթնած մղումով առաջ է պարգել թեւերը, ուրախ կանչել, որ իրեն ուղարկէին այդ գործը ստուգելու եւ որ իր արած նման խնդրանք նոյնիսկ սուլթանը մերժած չի եղել։ Շարունակել, որ իրեն լիազօրէին կազմակերպելու տարագիրների կառաւանները։ Աստուած իրեն ուժ կը շնորհէր, ոչ մի դրուշ էէր պահանջի կառավարութիւնից, դրամական բոլոր միջոցները ինք կը հայթաթէր, գերմանական ու ամերիկեան ընկերութիւնները այն իրեն կը տրամադրէին։ Նախկինում նման աշխատանք ինք կատարած է եղել, հիմնել որբանոցներ, հիւանդանոցներ։ Հաւառակ պատերազմական վիճակի, կարող էր այն իրականացնել եւ որ անձամբ ինքը իրենից շնորհակալ կը լինէր։

Էնվէրը լարուածութեամբ էր ունկնդրել պատուելիին։ Փոխուել էր նրա պատանեկան անմիտ դէմքի արտայայտութիւնը, յարգալից պատասխանել, որ Լեփսիուսի դիտաւորութիւնները հետաքրքրել են իրեն, սակայն մերժում է։ Աւելացրել, որ նրա ցանկութիւնը ցոյց է տալիս, մինչեւ այժմ սխալ էին միմեանց հասկացել։ Եթէ ինքը մի օտարականի արտօնէր, որ հայերին օգնութիւն ցոյց տար, ապա այն կարծիքը կը ստեղծուէր, որ ընդունում է այլազգի անձանց, հետեւաբար նաեւ արտասահմանեան պեռութիւնների միջամտութիւնը։

ՅՐԱՆԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԹՆՃՈՒԿԸ

Մարունակուածէջ 16-էն

բայրական մթնոլորտի եւ հոգեւոր եւ հասարակական ծառայութեանց ակնկալուած նոր ակիւնադարձին առջեւ։ Դժբախտաբար անոնք մնացին երա՛գ..... խաբկանքի սահմաններուն մէջ։

Այսօր խրամատը աւելի խորացած է հայրենիքի եւ սփիւռքի միջեւ։ Հայց. Եկեղեցին որ միջնաբերդն է հայու հաւատքին եւ գոյութեան, որ պիտի դառնար պողպատեայ անխորտակելի միացնող կամուրջը հայրենիքի եւ սփիւռքի հայութեան, դարձաւ երկպառակութեան եւ ապականութեան խորհրդանիշ։

Հայ ժողովուրդը դարերու ընթացքին յատուկ եւ կարեւոր դեր մը վերապահած է եկեղեցւոյ իշխանութեան, ո՛չ որպէս միահեծան բռնակալ իշխանութիւն, այլ՝ բարոյական հեղինակութիւն, թափանցիկ եւ համարատու իր ժողովուրդին։ Լռութիւնը բացարձակապէս ներելի եւ օգտակար չէ այս պարագային։

Թեմական հարցերու դժուարութիւններն ու կարգադրութիւնները միայն եկեղեցական խնդիրներ չեն։ Սահմանադրական կանոնագրութիւնները պէտք է յարգուին իւրանքանչիւր Թեմէ ներս։ Թեմական մարմիններ, որոնք ընտրուած են իրենց ժողովուրդին կողմէ, պարտին որոշել այդ Թեմէն ներս կատարուելիք կրօնական–հասարակական աշխատանքները ըստ տուեալ կանոնագրութեան, եւ

Այդ դէպքում, կը խալիսլէին իրենց քաղաքականութեան հիմքերը, քաղաքականութիւն, որ Հայ ժողովուրդին կը սովորեցնէր ինչի էր յանգում օտար միջամտութեան կաբօտը։ Եւ որ ինքը պատժում էր պետական դաւաճանութեան վրայ հիմնուած նրանց երազանքը, յոյսերը, եթէ ինք նրանց մօտ ուղարկելու լինէր նրանց ազդեցիկ բարեկամներին, կրկին կեանքի կը կոչուէին նրանց երազանքները։ Ո՛չ, Պարոն Լեփսիուս, աւելացրել էր էնվէրը, այդ անհնարին է, չենք կարող թոյլ տալ ոչ մի օտարերկրացի նրանց բարեգործութիւն անէր, հայերը մե՛զ պէտք է տեսնէին որպէս իրենց բարեգործների։

Լեփսիուսը ամէն ինչ կորած է համարել, յուսահատ փլուել էր աթոռին, խօսելն արդէն աւելորդ համարել։ Յուսակտուր նայել մանկամիտ նալուածքով այդ անողորմ ժողովրդասպան մարդուն։ Պատուելին խորատուգուել էր խորը մտածմունքների մէջ, անմիջապէս չէր ըմբռնել էնվէրի ամբողջ լկտիութեամբ արած առաջարկը։

Էնվէրը շարունակեց, որ ինքն էլ մի առաջարկ ունէր՝ դրամ հաւաքէք, որքան կարող էք շա՛տ դրամ հաւաքեցէք Ձեր նշած ընկերութիւնների միջոցով, այն բե՛րէք ինձ մօտ, այն կօգտագործէի համաձայն Պարոն Լեփսիուսի զաղափարների ու ցանկութիւնների, սակայն երբեք չէի հանդուրժի ոչ մի օտարերկրացու միջամտութիւնը, աւելացրել է նա։

Լեփսիուսին զաւեշտական էր թուացել էնվէրի առաջարկը, որ իր հաւաքած դրամը Թուրքիա պիտի մտնէր։ Պատուելին լուել էր, ջախջախուած էր, թէեւ գրոյցից առաջ էլ մեծ յոյսեր չէր կապել էնվէրի հետ հանդիպումից՝

ՀԱՍԿԱՅԵԼ Է, ՈՐ ԱՇԽԱՐՀԸ ՓՈՒԼ Է ԵԿԵԼ...

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԹՆՃՈՒԿԸ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԹՆՃՈՒԿԸ

Առաջնորդ ու Կաթողիկոս պարտին յարգել այդ Թեմի կանոնադրութեան տրամադրութիւնները, առանց մերժելու ժողովրդավարական կարգն ու կանոնը։

Համահայկական պատմութեան ներկայ հանգրուանին, երբ նոր մարտահրաւէրներու առջեւ կը կանգնինք, պարտաւոր ենք խուսափիլ նոր պառակտումներէ, որոնք կրնան եւ պիտի խախտեն մեր ժողովրդավարական կանոնագրութեան հիմերը։ Թեմերը աւատապետական կալուածներ չեն եւ չեն ալ կրնար ըլլալ։ Հայց. Եկեղեցւոյ ազգային ներկայացուցչական նկարագիրը պարտաւոր ենք մշակել, զարգացնել եւ արժեւորել, առանց անոր տալու կղերապետական–մենատիրական հանգամանք, թէկուզ նման ախորժակներ ունեցող դեկավարներ շատ են այս օրերուն։

Ներկայիս սփիւռքեան պայմաններու մէջ, բոլորիս ալ ծանօթ է որ եկեղեցին համախմբելու մեծ կարողութիւն ունի։ Հետեւաբար՝ պարտաւոր ենք ստեղծել եկեղեցիներու շուրջ ներգործօն ազգային կեանք ժողովրդային մասնակցութեամբ։ Այսօրուան դեկավարութիւնը կը յաջողի ա՛յն ատեն, երբ կը յաջողի համախմբել ժողովուրդի ստուար մեծամասնութեան մասնակցութիւնը եկեղեցւոյ հոգեւորընկերային կեանքին մէջ, հիմնուած միայն ու միայն ժողովրդավարական սկզբունքներու վրայ, հեռու վանելով մենատիրական ախորժակները։

«Հարազատ թշնամին»

Շարունակուած էջ 2-էն

րութեան կազմը. բոլոր նրանք, ովքեր Տիգրան Սարգսեանի այդ յայտարարութիւնից յետոյ պաշտպանեցին իրենց վերադասին, այլեւս կառավարութիւնում չեն: Այսինքն՝ կառավարութեան փոփոխութիւնը, իբրեւ թէ՛ նոր նախարարների նշանակումը պայմանաւորուած էր ոչ այնքան՝ նախորդի վատ աշխատանքով, երկրի խայտառակ սոցիալ-տնտեսական վիճակով, այլ՝ Քոչարեան-Սարգսեան պայմանաւորուածութիւններ խախտմամբ եւ դրանք վերականգնելու անհրաժեշտութեամբ: Իհարկէ, նոր վարչապետի նշանակումից յետոյ, ինչպէս՝ Քոչարեանի կողմից անձամբ, այնպէս էլ՝ նրա շրջապատի ներկայացուցիչների մակարդակով իշխանութեանն ուղղուած քննադատութիւն հնչել է, հնչել է նաեւ պատասխան՝ անձամբ Յովիկ Աբրահամեանի կողմից: Բայց այդ քննադատութիւնների եւ պատասխանների ուշադիր ընթերցումն ակնյայտ է դարձնում, որ դրանցով կողմերը վերադարձել են եւման կէտին՝ ընդհանուր, գլոբալ քննադատութիւններ

«ՆԱԽԱԳԱՅ ԸՆՏՐԵԼՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼՆ ԱՒԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ Է»

Շարունակուած էջ 5-էն

Այնքան ժամանակ, որ մեր երկրում մի ուժ կայ, որն իրեն թոյլ է տալիս այլ երկրում զինուորական օժանդակութիւն իրականացնել, ուրեմն միշտ դրսից պատասխան վտանգը կայ: Մինչդեռ Լիբանանի կառավարութիւնը Միրիայի ղեպքում որոշում է ընդունել՝ ցուցաբերել դրական չէզոքութիւն, եւ բոլոր ուժերին կոչ է արել չմիջամտել Միրիայի խրթին հարցին: Ի դէպ, երկրի նախագահին ընտրում է խորհրդարանը: Ի՞նչ առաւելութիւն ունի նախագահի ընտրութեան այդ մոդելը: Երկու մոդելներն էլ՝ ժողովրդի կողմից եւ խորհրդարանում ընտրուելու, ունեն իրենց առաւելութիւնները, բայց ես կարծում եմ, որ խորհրդարանական ձեւն աւելի դեմոկրատական է՝ քան միւսը: Երբ նախագահը ժողովրդի կողմից է ընտրուում, իր իրաւասութիւններն ու լիազօրութիւնները շատ աւելին են լինում, հետեւաբար՝ մի մարդուց է կախուած երկրի ութսուն տոկոս պատասխանատուութիւնը: Իսկ եթէ պատահի, որ սխալ մարդ նստի այդ աթոռին,

րով պահպանել հակադրութեան իմիտացիան, բայց չդիպչել կողմերից որեւէ մէկի «թոյլ տեղերին»: Քոչարեանի եւ Սարգսեանի միջեւ հակադրութեան իմիտացիան առաջիկայում կարող է աւելի սուր եւ դրամատիկ դրսեւորուներ ստանալ: Առջեւում սահմանադրական փոփոխութիւններն են, դրանից յետոյ՝ խորհրդարանական, ապա՝ նախագահական ընտրութիւններ: Իսկ դրանցում իրական յաղթանակ տանելու՝ 1998 թուականին վերցուած իշխանութիւնը պահպանելու համար պէտք է հասարակութեանը զբաղեցնել ներկայ եւ նախկին իշխանութիւնների միջեւ անհաշտ պայքարի տեսարաններով: Կեանքը ցոյց է տուել, որ հասարակութեանը դրանք զրաւում են գրեթէ այնպէս, ինչպէս սերիալները: Ի դէպ, հիմա ամենապոպուլար համարուող սերիալներից մէկի անունն է «Հարազատ թշնամին»: Այստեղ են ասել՝ կեանքում՝ ինչպէս քաղաքականութեան մէջ: Կամ՝ ինչպէս սերիալում: Քաղաքական կեանքում այն կարող է «հեռարձակուել» եւս երեք-չորս տարի՝ մինչեւ 2018 թուականը:

ապա կարող է երկիրը սխալ տեղ տանել: Իսկ խորհրդարանի կողմից ընտրութեան ղեպքում միշտ հետեւողական աշխատանք է տարւում, նախագահին հարց ուղղելու, կանչելու, անվստահութիւն յայտնելու հնարաւորութիւն կայ: Եթէ նախագահը վարչապետ պիտի նշանակի, ապա միանձնեայ չի որոշում, բոլոր պատգամաւորներին մէկ-մէկ կանչում է, իւրաքանչիւրից թեկնածուի անուն է հարցնում, զրոււմ, եւ ամենաշատ ձայն հաւաքած թեկնածուին նա ստիպուած է վարչապետ նշանակել: Այդպէս աւելի քիչ է սխալուելու հաւանականութիւնը: Բայց մեզ մօտ էլ խորհրդարանական ընտրութիւնը թափանցիկ չէ, ընտրական օրէնքն արդար չէ, ժողովրդի ճիշտ ներկայացուցիչներ չեն ընտրւում: Եթէ խորհրդարանը ճիշտ ներկայացուցիչներ ընտրի, վստահեմ՝ պառլամենտական ձեւը շատ աւելի էֆեկտիւ ու շատ աւելի ժողովրդավարական կը լինի: Հայաստանն էլ արդէն անդրադառնում է այդ ձեւին, քննարկումներ լինում են, եւ կարծում եմ՝ շուտով այս առումով փոփոխութիւններ կ'առաջարկուեն:

ԸՆԿ. ՍԱՐՕ ՄԱՐՏԻՐԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅԸ «LE PARISIEN» ԹԵՐԹԻՆ

Շարունակուած էջ 5-էն

Կուսակցութիւնը ունի մշակութային, մարզական, գործունեայ մասնաճիւղեր... Մենք կը փորձենք վերականգնել մեր ինքնութեան կապը, խուսափելով ազգայնամոլութենէ: Մենք կ'ուզենք որ բոլոր հայերը կապուած մնան իրենց արմատներուն: Ասոր համար, ամէն ինչ կ'ընենք պահպանելու համար մեր լեզուն: Թղթակից-Յաջորդ տարի մէկ դար պիտի ըլլայ ցեղասպանութեան:

Ի՞նչ կը նախատեսուի: Սարօ Մարտիրեան-Թուրքիոյ մէջ, կապեր հաստատեցինք, որպէսզի ստեղծուի հարթակ մը համաթմբելու աշխարհի բոլոր նախաձեռնութիւնները: Հայութիւնը ամէն տեղ է, ցրուած տարբեր երկիրներու մէջ՝ ինչպէս իմ ընտանեկան պարագա ներս: Հարիւրամեակի սեմին պիտի շարունակենք մեր աշխատանքը տասնապատկելով մեր ճիգերը: Էլշա Մարմէք, 28 Ապրիլ 2014 Թարգմանուած «Le Parisien»-էն

Վտանգաւոր վիճակ Արցախում

Շարունակուած էջ 2-էն

յայտնուել են աշխարհքաղաքական ու բնական շրջափակման մէջ, որոնք իրականացրել են Ռուսաստանն ու Թուրքիան: Արեւմուտքն առայժմ փորձում է թոյլ չտալ այնպիսի զարգացումներ, որոնց արդիւնքում ռուսական զօրքը կը յայտնուի Ղարաբաղում: Սակայն Արեւմուտքը միատարր հասկացութիւն չէ, եւ եթէ թուրքական լոբբիին յաջողուի գնել Ուաշինգտոնի որոշ շրջանակների, նրանք կարող են աչք փակել Ղարաբաղում ռուսական զօրքի ներկայութեան

ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԿԸ ՀԱՍՆԻ \$900,000Ի

Շարունակուած էջ 6-էն

յինէն՝ Լենա Պօզոյեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէէն՝ Աւետիք Իզմիրեան, Հայ Բարեգործական Ընդհ. Միութենէն՝ Գրիգոր Քարակէօզեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութենէն՝ Գաբրիէլ Մոյոյեան, Ռամկավար Ազատական Կուսակցութենէն՝ Յակոբ Նազարեան եւ Լոս Անձելըսի Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութենէն՝ Եսթեր Թոկնոցին: Համերգը շատ մը հովանաւորներ ունէր: Զեռնարկին ներկայ եղան Ընդհանուր Հովանաւորը՝ Կլէնտէյլ Քիա ընկերութեան Օննիկ Մեհրապեանն ու ընտանիքը: Ծրագիրը շարունակուեցաւ փոխն ի փոխ երգերով, նուագով, պարերով ու բանաստեղծութիւններով մասնակցութեամբ Ալին Արուստամեանին, Յարութ Ճեղեկեանին, Սալբի Մայիլեանին, Արթիւր Մատոյեանին, Յարութ Յակոբեանին, Գաբիկ Պատալեանին, Սամուէլ Սահակեանին, Հայբերդ Սարեանին եւ Անի Քրիսթինին: Յարութ Փամպուլքեանը երգեց, նոյն ժամանակ կիթառը նուագելով: Ռուբէն Յարութիւնեան դուդուկը նուագելով ընկերակցեցաւ Գարաւանի պարողներուն: Պարեցին նաեւ Տայնամիք Տուօն: Իսկ Համազգայինի «Անի» եւ «Պարոյր Սեւակ» Մասնաճիւղի «Նայիրի» պարախումբերը քանի մը տարբեր պարերով ելոյթ ունեցան:

Կայլակի Քեսապի նուիրուած «Կը լսուին ողբեր» բանաստեղծութիւնը կարդաց Նունէ Աւետիսեանը: Իսկ վերջին օրերուն մահացած համբաւաւոր երաժիշտ Կոնստանտին Օրբելեանի (1928-2014) յիշատակին, Արմէն ԱՏարոնեանը դաշնակի վրայ նուագեց իր ստեղծագործութիւններէն մին: Քեսապը Կիլիկիոյ մաս կազմած ըլլալով, վերջին երգը «Կիլիկիա»ն էր, որուն առաջին տունը Արթիւր Յակոբեանը երգեց անգլերէնով, իսկ մնացեալ երգիչները իրեն միացան երգի մնացեալ տուները երգելով Նահապետ Ռուսինեանի բնագրով: Փակման խօսքը փոխանցեց Արա Արոյեան որ ՍԱՐՖԻ Գործադիր Մարմնի փոխատեսապետն է: Ան բարձրօրէն գնահատեց Լուիզ Մարտիրոսեան Կիլին տեսլականը, յարատեւութիւնն ու համոզիչ ըլլալը իբրեւ համերգի յանձնախումբի համաատենապետ եւ ՍԱՐՖԻ կողմէ իրեն յուշատախտակ մը յանձնեց: Մասնակցող արուեստագէտները յատուկ հաստատագիրներ ստացան Գոնկրեսական Ատամ Շիֆի (28րդ շրջան) եւ Քալիֆոռնիայի խորհր-

եւ Ղարաբաղը բաժանելու վրայ: Այնպէս, ինչպէս աչք են փակել Ղրիմի բռնակցման վրայ, համաձայնուել են Պրիդնեստրովիէի կորստի հետ: Յանուն Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի մեծ մասը ստանալու, յանուն Ատրպէյճանից ու Իրանից դէպի Եւրոպա խողովակի կարելի է գոհել եւ Ղրիմը, եւ Պրիդնեստրովիեն, եւ Ղարաբաղն ու Հայաստանը: Ասենք, մեծ կորուստ չէ, առաւել եւս, որ դա հնարաւոր է դարձել Սեպտեմբերի 3-ից յետոյ, երբ հայերն իրենք չեն դիմադրում ռուսական էքսպանսիային:

դարանի Մայք Կաթոյի (43րդ շրջան) գրասենեակներէն: Ծրագիրը կարելի եղաւ իրագործել մեծ թիւով կամաւորներու մասնակցութեամբ, իսկ բեմական բաժինը յաջողեցաւ փակար Նիկոլեանի, Նէքթեուն Փրոտաքշընզ եւ Վալ Յովհաննէսեանի ջանքերով: Ծրագրի երգերու ու պարերու բազմազանութիւնը՝ ինչպէս «Ատանայի Կոտորած»-էն մինչեւ «Երազ իմ երկիր»ը աւիթ տուաւ որ հանդիսատեսը կարենայ իր զգացողութեան համեմատ տխուրէն ուրախ տրամադրութեամբ տարուբերի: Հանդիսատեսները իրենց զգացողութեան ուժգնութիւնը լսելի դարձուցին իրենց ծափահարութիւններով: Իսկ Քեսապի մէջ հաւրագատ կորսնցուցած հանդիսատեսներէն մին ըսաւ, «Իրենք երգեցին, մենք լացինք»»: Անոնք որոնք Սուրիոյ պատերազմէն տուժած հարազատներ ունին, արդէն իսկ մեծ գոհողութիւններով, մինչեւ իսկ ամենէն փոքր հաճոյքներէն իրենք գիրենք զրկելով օգնութիւն կը հասցնեն անոնց: Մնացեալներուն պարտականութիւնն է որ իր օգնութեան բաժինը բերէ Սուրիահայերուն, ինչպէս որ Զաւէն Խանձեանը ըսաւ.- «Եւ հիմա, Լսէ՛ Հալէպ Դղրդիւններն ոտքերուն Եւ Դամասկոս Դոփիւնն պարմանուհիներուն: Լսէ՛ Քէսապ Եթերային ձայնը ջինջ Շուրջպար բռնած Հայաբորբ երգիչներուն: Լսէ՛ անոնց արձագանգը Ալէքսէն Համանուագ, հոգեզմայլ եւ համաշունչ Միահամուռ աղաղակով կենդանի: Թէ՛ Մենք Հո՛ս Ենք Սուրիահայ ազգակիցներ»:

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը կազմուած է Օգոստոս 2012ին հտեւեալ անդամներով.- Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Թեմ, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմ, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ Օգնութեան Միութեան Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Շրջան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն: Մեր հասցէն է՝ Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948: Համացանցի հասցէն է՝ www.SyrianArmenianReliefFund.org:

ՑԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՄԱՐԳԻՍ ԻՆԳՆԱՏԻՈՍԵԱՆի մահուան տխուր առիթով Կիլիկիան Բարեգործական Միութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

ՑԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՏԻՐԱՄԱՅՐ ՍԻՐԱՆՈՒՇ ԹՈՔԱԹԼԵԱՆի մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ.ի Կլէնտէյլի «Արսէն Կիտուր» Մասնաճիւղը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս իր անդամներէն՝ Սարգիս Զէլֆէյեանին:

ՑԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻ ՀԱՄԲԱՐԵԱՆի եւ ԲԱՐՍԵՂ ՂԱՐԻՊԵԱՆի մահուան տխուր առիթներով (մահացած են Հալէպ) «Մասիս» Շաբաթաթերթի անձնակազմը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալներու համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Կարօ, Աւօ եւ Ռաֆֆի Ղարիպեաններու եւ իրենց ընտանիքներուն:

ՑԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻ ՀԱՄԲԱՐԵԱՆի եւ ԲԱՐՍԵՂ ՂԱՐԻՊԵԱՆի մահուան տխուր առիթներով (մահացած են Հալէպ) Ս.Դ.Հ.Կ.ի Կլէնտէյլի «Արսէն Կիտուր» Մասնաճիւղը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալներու համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Կարօ, Աւօ եւ Ռաֆֆի Ղարիպեաններու եւ իրենց ընտանիքներուն:

«ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՅԱՅԱՍՏԱՆ»

Շարունակուած էջ6-էն

Սոյն բարձրորակ տեսաերի-զով ականատեսները ժամ մը ամբողջ շրջեցան Կեսարիա, Մերսին, Կոռիկոս եւ Ատանա: Հապա ինչ ըսել հայոց երբեմնի մայրաքաղաք եւ կաթողիկոսական նստավայր Սի-սին, Հաճընը «Սիրուն»ին ու Կի-լիկիոյ գեղատեսիլ հողատարածքին, Սողաքօլուզ գիւղին, Զէյթու-նին, Գրըզիային ու այլ բնակա-վայրերուն:

Ներկաները հիացումով դի-տեցին պատմական Վանայ լիճն ու Ախթամար կղզիի Սուրբ Խաչ եկե-ղեցին: Տարբեր էր սակայն Տիգրա-նակերտ քաղաքը իր վերանորոգ-ուած Ս. Կիրակոս եկեղեցիով: Ամէ-նուրեք հագիւ նշմարելի էին հայ-կական բնակելի հին թաղամասերը, որոնք անխօս վկաներն են երբեմնի փառաւոր անցեալի: Ափսոսանքով դիտուեցան հայկական ճարտարա-պետութեամբ կառուցուած եկեղե-ցիները, որոնք այսօր դարձած էին մէկ մէկ մզկիթներու յատկապէս Ուրֆա, Այնթապ, Մարաշ, Կարս եւայլն:

Տարբեր էր Անին, Հայաստա-նի երբեմնի մայրաքաղաքը (10րդ եւ 11րդ դար): Տնտեսական եւ մշակութային այս խոշոր քաղաքը դարձած էր աւերակ, երկրաշարժի եւ ներխուժող Լենկիթիմուրուի, Մոն-կոլ թաթարներու արշաւանքնե-րուն պատճառով: Զեա կրնար հի-ացումով չդիտել Բագրատունինե-րու օրով կառուցուած Մայր Տա-ճարի հոյակապ կառույցն ու պա-րիսպներու եւ այլ եկեղեցիներու

աւերակները: Կողքին Ախուրեան գետն է, սահմանագիծը արդի Հա-յաստանի:

Հանդիսականները յուզումով եւ հոգեկան տարբեր ապրումներով հետեւեցան Յարութիւն Ֆոտուլեա-նի պատրաստութիւնն եղող այս գեղարուեստական տեսալսողական նորագոյն թէքնիքով պատրաստ-ուած ֆիլմի ցուցադրութեան: Անոնք հաղորդակից դարձան մեր նախնի-ներու բնօրրանին, գեղատեսիլ վայ-րերուն: Արդարեւ, ցուցադրութիւն մը ըլլալէ աւելի նաեւ գեղարուես-տական վայելք մըն էր, քանի որ իւրաքանչիւր տեսարանին ազուց-ուած կ'ըլլար երաժշտութիւն մը, ասմունք մը, իւրայատուկ երգ մը եւ կամ աղօթք մը այդ վայրին ճշգրտօրէն համապատասխանող կա-տարումով մը:

Յ. Ֆօտուլեանը նախապէս ճանչցած էինք որպէս վարպետ ասմունքող, կամ դերասան: Սակայն այս վաւերագրական ֆիլմով մենք ճանչցած եղանք զինք որպէս նկա-րահան եւ արհեստավարժ ֆիլմար-տադրիչ:

Վարձքդ կատար սիրելի Յա-րութ: Կ'արժէ այս պատմավաւե-րագրական ֆիլմը ցուցադրել նաեւ հայկական վարժարաններու եւ հաս-տատութիւններու մէջ, որոշ սրբագ-րութիւններ կատարելէ ետք:

Երեկոյթի աւարտին տեղի ու-նեցաւ հարց-պատասխանի ասու-լիս, որմէ ետք Գրիգոր Մոլոյեան շնորհակալութիւն յայտնեց շնոր-հալի արուեստագէտ Յարութիւն Ֆօտուլեանին իր այս խնամուած բարձրարժէք գործին համար:

ԳԱՐԵԳԻՆ ԿՈՋԻԿԵԱՆ

Շարունակուած էջ 15-էն

Ադամեանիմ (Ա.Մ.Ն.), Կ. Պոլիս, 1909 Մարտ 27: Հայաստանի ազգային արխիւ

9– Թէոդիկ, «Տիպ ու Տառ», Կ.Պոլիս, 1912, էջ 124:

10– Գ. Կոզիկեանի նամակը րնկ. Գէորգիմ, Կ.Պոլիս, 1909 Մարտ 30: ՀԱԱ:

11– Գ. Կոզիկեանի նամակը ԱրամԶարդարեանիմ (Ա.ՄՆ), Կ. Պո-լիս 1910 Սեպտ.27: ՀԱԱ:

12– Anahide Der Minassian,... p.154:

13– Լեւոն Վարդան, «Հարկե-բը Օսմանեան եւ Պարսկական Կայսրութիւններուն Մէջ Ժե-ի Դա-րեք» Ա. հատոր, Երեւան 2004, էջ 66–75:

14– Արսէն Կիտուր, «Պատմու-թիւն Ա.Դ.Հնչակեան Կուսակցու-թեան» Բ հատոր, Պէյրութ, 1963, էջ 406–407:

15– Սիմոն Վրացեան, «Կեանքի

«ՎԷՐՔԸ ԽՈՐՈՒՆԿ Է...»

Շարունակուած էջ 13-էն

Իրենց շրջանին քանդումներուն եւ կոտորածներուն որպէս հետեւանք...:

Գերմանական «էյնթիլի» հիւանդանոցին մէջ, Տօքթ. Ֆիլիփ ձեռք ձգեց լայն փորձառութիւն եւ մեծ հուշակ: Բոլորին կողմէ դարձաւ սիրուած եւ յարգուած բժիշկը: Անոր ծառայասէր բնաւորութիւնը եւ մարդկային– քրիստոնէական հո-գին ակներեւ էր:

Բժշկական մասնագիտութեան մէջ, ան ձեռք ձգեց մեծ փորձառու-թիւններ եւ կրցաւ կատարել բարդ գործողութիւններ ներառեալ այն իւրայատուկ գործողութիւնը՝ որուն «Վէրքը խորունկ էր»...:

Թուրք մը փամփուշտով զարն-ուած՝ դիմեց Տօքթ. Ֆիլիփ Յով-նանեանի եւ նոյնինքն էյնթէլիի հիւանդանոցին մէջ: Տօքթ. Ֆիլիփ յանձն առաւ հանել կապարը մարմ-նին մէջէն: Վիրաբուժութեան ժա-մանակ, Տօքթ. Ֆիլիփ կ'ապրէր ար-տասովոր յուզում, ու տակաւին կը քրտնէր եւ կը հեւար ...: Բուժքոյ-րերու եւ իր չորս կողմի միւս բժիշկներուն համար քիչ մը տարօ-րինակ թուեցաւ Տօքթ. Ֆիլիփի այս երեւոյթները ...: Վերջապէս, ան ծանօթ բժիշկ էր եւ չէին կրնար կասկածիլ իր կարողութիւններուն վրայ: Եւ չուշացաւ անոնց հարցումը Տօքթ. Ֆիլիփին, թէ ինչո՞ւ այդքան ազդուած ու տակնուվրայ է...: «Վէրքը խորունկ է» եղաւ անոր պատասխանը: Պահ մը անոնք կար-ծեցին թէ Տօքթ. Ֆիլիփ կը խօսի վէրքի ու անոր ֆիզիքական հետքե-րուն խորունկութեանը մասին ...: Բայց չ'ուշացաւ Տօքթ. Ֆիլիփի յստակացումը...: «Վէրքը խորունկ է ոչ թէ հիւանդին՝ այլ իմ մէջ»: Եւ ինքզինք վերագտնելով շարունա-կած է. . Այս մարդը սպաննիչը եղած է եղբօրս: Զաղացքի թաքատոցէն դուրս բերելով գնդակահարած է զինք, անտեսելով անոր պաղատան-քը: Դիակն ալ թողած է անթաղ ...ե:

Ռուպերտը սպաննողը՝ Զոպան (իմմա «հրէշը») եւ Ռուպերտին եղբօր՝ Տօքթ. Ֆիլիփ Յովնանեանի հանդիպումը մի քանի տարիներ ետք ...:

Զոպանը հիւանդանոց մնաց եւ արժանացաւ Տօքթ. Ֆիլիփի խնամ-քին: Զինք արձակելէ ետք՝ Տօքթ. Ֆիլիփ կ'ըսէ «Դէ'հ հիմա գնա, եթէ դուք սպաննել զիտէք, մենք ալ զիտենք բուժել...»: Տօքթ. Ֆիլիփ

Ուդիմերով», Բ. հատոր, Պէյրութ, 2007, էջ 210:

16– Թուրքիոյ Վարչապետա-րանիմ Կից Օսմանեան Արխիւ, Գնր-փիմ գործոց նախարարութիւմ, քղբապնակ 65, փաստաթուղթ 2, 1331.6.5:

17– «Նոր Աշխարհ», 1912 Մարտ 9/22:

18– «Նոր Աշխարհ», 1912 Մարտ 13/26:

19– «Նոր Աշխարհ», 1912 Մարտ 29/11 Ապրիլ:

20– «Նոր Աշխարհ», 1912 Ապ-րիլ 3/16:

21– «Բիւզանդիոն», 1912 Մա-յիս 28/10 Յունիս «52–րդ Տարեդարձ Ազգային Սահմանադրութեան»:

22– Ա.Գուլեան,... էջ 322–23:

23– Թէոդիկ, «Յուշարձան Ապ-րիլ(11) Քսանչորսի», Բ. տպագր., Պէյրութ 1985, էջ 74:

24– Գառնիկ Ստեփանեան, «Կենսագրական Բառարան», Բ. հատոր, Երեւան 1981, էջ 118:

Յովնանեանի, զսպուած վրէժխնդ-րութիւնն էր...:

Տօքթ. Ֆիլիփ Յովնանեան իր մարդկային ու քրիստոնէական կեց-ուածքներուն ու նկարագրին կող-քին՝ ունէր ազգային հասարակական լայն գործունէութիւն: Ան միշտ նեցուկ կանգնեցաւ հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գաղափա-րին՝ եւ անոր համար կռուող քաջամարտիկներուն: Ան գիշերով կ'այցեւիջ հայ ֆետայիներուն եւ կը խնամէր բոլոր վիրաւորեալները, եւ դեղ ու սնունդ կը հայթայթէր անտեսելով ամէն վտանգ:

Տօքթ. Ֆիլիփ Յովնանեան՝ որ կրցած էր բուժել մեծ թիւով հիւանդ-ներ ու վիրաւորներ՝ չի կրցաւ ինք իր մատն ստացած աննշան վէրքին դարման մը գտնել: Ան վարակուե-ցաւ արեան ծանր թունաւորումով եւ տառապեցաւ 40 աստիճանէ վեր ջերմութեամբ, եւ մահացաւ 1936 թուականին հագիւ թեւակոխած 56 տարիքը ...:

Տօքթ. Ռուպերտ ձէպէճեան՝ հօ-րեղբայրս եւ որ նաեւ անուանուած էր իր սպաննուած մօրեղբօր անու-նով՝ հաւատարիմ մնաց իր մօր Եւնիկէի թելադրանքին ու զրի առաւ այս բոլորը իր յուշերուն մէջ: Եթէ զրի առաւ որպէս պատմութիւն՝ բայց նաեւ ժառանգ ու մարտահրա-ւէր: Ժառանգ իր ընտանիքին՝ եւ մարտահրաւէր՝ թէ հայը պէտք է շարունակէ իր կեանքին պայքա-րը...: Թէ հայուն «Վէրքը խորունկ է» ու տակաւին ըստ պատշաճի չէ բուժուած...:

Բայց նաեւ կայ պատուէրը...: Եւ պատուէրին հետ իրականու-թիւնը... թէ այս «խորունկ վէրքը» որքան որ իրական է, բայց չ'ընկճեց հայը...: Այլ իր հետ Յեղասպանու-թեան իւրաքանչիւր կեանքի հանգր-ուանին՝ հոս թէ հոն, հայը կրցաւ գտնել իր «բուժումի» ապրող ու ապրելու հնարքները ...: Եւ այս հնարքներով՝ հայը կը կենայ այսօր որպէս վերապրող իրականութիւն եւ կը նայի 100 ամեակին ու իր արդար պահանջատիրութեամբը...:

Տօքթ. Ֆիլիփ Յովնանեանի «խո-րունկ վէրքը» իւրաքանչիւր հա-յունն է: Հայկական Պետականու-թիւն ու Սփիւռքահայ իրականու-թիւն եւ աշխարհով մէկտեղ ...: Այս «խորունկ վէրքը» աւանդ է՝ որ հայը պէտք է շարունակէ տանիլ՝ 100 ամեակ ու անդին, մինչեւ իր պա-հանջատիրութեանը համիլը ...:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

**Հայերը Պէտք է Շնորհակալութիւն Յայտնեն
Էրտողանին՝ Ցեղասպանութիւնը
Զճանչնալուն Համար**

ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայյիփ Էրտողանի « 1915 թուականի իրադարձութիւններ»ուն վերաբերեալ յայտարարութիւնը, որ անցեալ շաբաթ հրապարակուեցաւ ինը լեզուներով, քարոզչական հսկայ ձեռքբերում էր Թուրքիոյ համար եւ տարածուեցաւ ամբողջ աշխարհի մէջ: Ուղերձը այնքան հմտօրէն ձեւակերպուած էր, որ մոլորութեան մէջ ձգեց միջազգային հանրութեան շատ մը ներկայացուցիչներ, ցաւօք, նաեւ որոշ հայեր, որոնք հաւատացին, թէ ան կը մօտենայ Հայոց Յեղասպանութեան ճանաչման կամ, առնուազն, «պատմական» քայլ կը կատարէ այդ ուղղութեամբ:

Իրականությունեան մէջ, էրտողանի յայտարարութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ վերաձեւակերպուած ժխտում կամ «Հին գինին» նոր շիշի մէջ»։ Զանադրաբար խոսասփելով Հայոց Զեղասպանութիւն եզրէն, ան փոխ առած էր արտաքին գործոց նախարար ԱՅմետ Տաւութօղլուի «ընդհանուր ցաւի» եւ «արդար յիշողութեան» խաբուսիկ եզրը, բառեր, որոնք կը թուին հաշտուողական, սակայն, ըստ էութեան, մարդասպանները կը հաւասարեցնեն զոհերուն։ Առաջին համաշխարհային պատերազմին ընթացքին մահացած միլիոնաւոր թուրքերու եւ այլոց վկայակոչումը Թուրքիոյ վարչապետին կողմէ վերաւորանք է Հայոց Զեղասպանութեան 1.5 միլիոն զոհերու յիշատակին։ Երկրորդ Համաշխարհային Պատերազմին եւս միլիոնաւոր գերմանացիներ զոհուած են, սակայն ոչ մէկ դիտակից եւ բարեխիղճ մարդու միտքով կ'անցնի անոնց մահը հաւասարեցնել վեց միլիոն հրեաներու բնաջնջման...

կանի իրադարձութիւնները ուսումնասիրելու նպատակով պատմաբաններու համատեղ յանձնաժողով» ստեղծելուն վերաբերեալ, եւս մէկ մաշած եւ հարցը յետաձգելու խորամանկ մարտավարութիւն է: Եթէ թրքական իշխանութիւնները անկեղծօրէն կ'ուզեն զիտնալ Հայոց ցեղասպանութեան փաստերը, անոնց կը մնայ միայն վերանայիլ իրենց սեփական արխիւներուն մէջ առկայ հսկայածաւալ փաստաթուղթերը, ինչպէս նաեւ բազմաթիւ պատմաբաններու եւ ցեղասպանագէտներու կատարած հետազոտութիւնները ամբողջ աշխարհի տարածքին: Ինչո՞ւ թրքական կառավարութիւնը զրեթէ 100 տարի անց նոր հետաքրքրութիւն կը ցուցաբերէ այս թեմայի ուսումնասիրման շուրջ: Ինչո՞ւ ամենազգայուն օսմանեան արխիւները դեռ զաղտնի կը պահուին, չիօսելով միւսներուն մասին, որոնք շատոնք արդէն ոչնչացուած են:

*Տարիներ շարունակ բազմիցս
գրած եմ, որ.*

1. Չնայած թրքական ժխտումներուն, Հայոց Յեղասպանութիւնը միջազգային հանրութեան կողմէ ճանչցուած փաստ է, եւ կարիք Հայաստանիւ նախագահ Օպամայի, վարչապետ էրտողանի կամ ուրիշի մը կողմէ անոր ընդունման:

2. Հայոց Յեղասպանութեան ճանաչումը Հի կրնար ուղղել այն անարդարութիւնները, որոնց պատճառով արմատախիլ եղաւ եւ կոտորուեցաւ ամբողջ ժողովուրդ մը: Աւելի նպատակայարմար պիտի ըլլայ արդարութեան հասնիլ դատական ատեաններու միջոցով, պահանջելով նիւթական փոխհատուցում եւ հայկական տարածքներու վերադարձ:

3. Թուրքիոյ «Հաշտեցման»
առաջարկը ուրիշ բան չէ, եթէ ոչ
չարամիտ հնարք թաղելու անցեա-

**ԼՐ անիմաստ ճանաչումով եւ մա-
կերեսային ներդրամատու թեան հայ-
ցով: Իսկական հաշտեցման կարելի
է հասնիլ միայն հայ ժողովուրդին
հասցուած վիթխարի վնասները
վերաջնելու միջոցով:**

Շատ կարեւոր է, որ հայերը զգօն ըլլան եւ չխաբուին հաշտեցման թրքական կեղծ առաջարկներով: Այժմէն մինչեւ 2015 Ապրիլ 24, Թուրքիոյ կառավարութիւնը, ամենայն հաւանականութեամբ, ա՛լ աւելի ճարպիկ գովազդային հնարքներու պիտի դիմէ՝ միջազգային հանրութեան համակրանքը շահելու համար եւ նուազագոյնի հասցնելու Թուրքիոյ արդէն վարկաբեկուած հեղինակութեան ցեղասպանութեան մեղադրանքներով պատճառուող վնասները:

Նման թրքական ծրագիր մըն է Տաւութօղլուի լկտի յայտարարութիւնը, թէ Հայկական Սփիւռքը նաեւ Թուրքիոյ Սփիւռքն է՝ Թրքական մամուլին մէջ լուրեր հրապարակուեցան, որ Թուրքիոյ կառավարութիւնը քաղաքացիութիւն կ'ուզէ շնորհել նախկին օսմանեան հպատակներու ժառանգորդներուն, ներառեալ՝ հայերուն: Զարմանալի է, որ որոշ միամիտ հայեր մոլորութեան մէջ ինկան կարծելով, որ ասիկա դրական քայլ մըն է...: Պարզապէս պահ մը պատկերացուցէ՛ք դուք ձեզ բնակութիւն հաստատած Թուրքիոյ կողմէ՛ գրաւուած Արեւմտեան Հայաստանի կամ Կիլիկիոյ որեւէ քաղաքի մը մէջ իբրեւ Թուրքիոյ քաղաքացի եւ ձեր որդիները՝ զօրակոչուած բանակ՝ «պաշտպանելու թրքական պետութիւնը» եւ մասնակցելու Քեսապի կամ Հայէպի կամ անգամ Հայաս-

ՈՎ ԻՆՉ ԱՆԻ, ԻՐԱՆ Կ'ԱՆԻ

Շարունակուած էջ 13-էն

կուեցլու, անբնական վիճակի է մատնուեցլու: Ախ, կ'ուզէի մօտենալ եւ տեղեկանալ իր մասին, բայց հնարաւոր է՞ր այդպէս քայլ վերցնել ...

Դեռ մինչ այդ ուշադրութիւն էի դարձրել իմ ետեւիս աթոռին, երկու հայ տատիկներ էին նստած իրենց հայերէնով խօսակցութիւնը ինձ յուշեց, իսկ ինձանից մի աթոռ ցած ձախին այլազգի տատիկ էր նստել լաւապէս իմ տեսողութեան ծիրի մէջ, նա լուռ ու մունջ, գլուխը կախ գեղղուած էր ճաղագործով, ճիշտ հակադատկերը այն մարդով՝ կեանքի նկատմամբ վառ յոյսերով գտեալնդուած: Տատիկը գործելու ընթացքում գլուխը մերթ քարձարացնելով ստուգում էր, թէ իր իջնելիք կանգառին հասե՞լ է, թէ՛ ոչ: Գալով մեր հայ տատիկներին, նրանք գեղղուած էին զրոյցով, ինձ հասնող բառերից հասկացալ, որ բամբասանքով են տարուած, նրանցից մէկը մի քանի անգամ կրկնեց ասելով՝ «Ո՛վ ինչ անի, իրան կ'անի»: Ես էլ համաձայն եղալ այդ ասացուածքի հետ, որը տարբեր բառակապակցութիւններով էլ ասոււմ է, օրինակ՝ ո՛վ ինչ ցանի, այն էլ կը հնձի, կամ ո՛վ ինչ քայլ վերցնի, նրան էլ արժանի կը լինի եւ այլն... : Այո՛, մարդն իր արարումներով է կեանքը տնօրինում՝ լաւ թէ՛ վատ, դրախտն ո՛ր դժոխքն էլ ինքն է կառուցում՝ բարի եւ չար արարքներով, մարդիկս խօսքն ու արտայայտութիւնն է ապացուցում իր խելացի եւ անմիտ լինելը, եւ այսպէս շղթայակերպ կարելի է հիւսել:

Ի տես այդ օտարազգի տատիկի աշխատանքը ժամանակից առա-

տանի վրայ յարձակման... Իսկ ի՞նչ պիտի ըսէք Թուրքիոյ քրէական օրէնագրքի 301րդ յօդուածով բանտարկուելու մասին, որովհետեւ անգլուշօրէն գրուցած էք Հայոց Յեղապանութեան մասին ձեր Թուրք հարեւաններէն մէկուրեւ հետ...

2014 Ապրիլ 23ի էրտողանի
յալտարարութեան իսկական նպա-
տակն է խոչընդոտել արդարու-
թեան հասնելու հայերու համաշ-
խարհային ջանքերը Հայոց Յե-
ղասպանութեան հարիւրամեակի շե-
մին:

Այն փաստը, որ ԱՄՆ պետական բաժանմունքը եւ եւրոպական որոշ պաշտօնեաներ դրական գնահատական տուած են էրտողանի յայտարարութեան, կը վկայէ, որ ասիկա համակարգուած փորձ էր քողարկելու Օպամայի վարչակարգի եւ եւրոպական երկիրներու համար, ձեռնպահ մնալու ցեղասպանութեան հարցով հայկական պահանջներէն, իբրեւ պատճուրակ օգտագործելով այն, որ Թուրքիոյ ղեկավարները հաշտեցման գործընթացի մէջ են հայերու հետ:

Հայերը պէտք է դիմաակայեն երրորդ կողմերուն՝ իրենց պատմական պահանջներուն հետապնդումէն հրաժարելու ճնշումներուն: Միացեալ Նահանգներու կառավարութեան կամ Եւրոմիութեան տեսակէտները թուրքիայէն հայկական պահանջներուն վերաբերեալ պէտք է անտեղի համարուին: Հայերը պէտք է տէր կանգնին իրենց սեփական ճակատագիրին եւ թոյլ չտան այլ պետութիւններու թելադրել, թէ ինչ բանն է ընդունելի կամ անընդունելի իրենց ազգային շահերը հետապնդելուն մէջ:

Լեւլագոյնը օգտուելու, ժամանակը իմաստաւորող մտածելակերպը այն-
քան հաւանեցի, որ ոգեւորուած ետ
դարձայ մեր հայ տատիկներին
ասելով մատով ցոյց տալով նրան.

-Տեսէք այդ կիներ, ինչպէս զբաղ-
ուած է մլրդործ անելով, անպայման
մի բան հիւսելով եւ աւարտին
նրանով ուրախանալու է, իսկ դուք,
չատ պիտի ներէք իմ արտայայտու-
թեան համար, զբաղուած էք ձեզ
անհանգստացնող խօսակցութեամբ:

Նրանք չփոթուած հետեւելով իմ ցուցմունքին վիզները երկա-
րած նայեցին այդ կնոջ եւ նրանցից
մէկը վրդովուած իմ յանդուգն
նկատողութիւնից վրայ բերեց.

-Մենք էլ այդ գործերից շատ ենք արել:

Մեր երկխոսութիւնը չչարու-
նակուեց, մտքով տարուեցի տատի-
կի պատասխան խօսքով: Այո՛, մեր
մայրերը արել են, մայրս անգամ-
ներ մեր ընտանիքի համար բլուզ-
ներ է գործել, որոնք թէ՛ դիմաց-
կուն էին եւ թէ՛ շահաւէտ: Հիս-
ուած քաղործութիւնը եւ ստեղնա-
գործութիւնը տարածուած է եղել
հայ ընտանիքներում, արուեստի
գործեր են ստեղծուել, նմուշները
մեր թանգարաններում տեսանելի:
Անկասկած հայ մայրը զոհողու-
թիւններով է կեանք տալու
նորիւրում ընտանեկան կազմին,
բայց այստեղ Ամերիկայում կար-
ծես մոռացուած է այս ձեռագոր-
ծութեան արուեստը, որը պարապ
ժամանակի մտերիմ ընկերն է եւ
չնորհքների ցուցադրումը, ժամա-
նակին նաեւ ոմանց համար եկամ-
տաբեր աշխատանքի աղբիւր էր:

Ժամանակը արժեևորող այդ սիրելի տատիկը ինձանից շուտ իջաւ, նրանից յետոյ ես:

UQUHU

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

*** \$50,00 * \$100,00 (first class) for USA**

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենյակները վերանորոգուած

ԵՆ ԵԱՐՄԱՐ ՎԱՐՃՔԵՐՈՎ

հեռաձայնել՝ (626) 398-0506